*Հավելված 4*

*«___»___________ 2016թ. կնքված*

*N ՊԸԾՁԲ-ԳՀԾ-ՁԻԱՀ-16/1- ծածկագրով գնման պայմանագրի*

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
«21» հունիսի 2016թ.
N 1910 - Ա հրամանի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ, ԿՈՄԵՐՑԻՈՆ ՍԵՌԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

*Մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի մեթոդով ՄԻԱՎ վարակի տարածվածության և ռիսկային վարքագծի վերաբերյալ հետազոտություն թմրամիջոցների ներարկային օգտագործողների, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց և տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդկանց շրջանում*

## Հապավումներ

| | |
|---|---|
| **ԱՀԿ** | Առողջապահության համաշխարհային կազմակերպություն |
| **ԱՆ** | առողջապահության նախարարություն |
| **ԱՎԵԽ** | առավել վտանգի ենթարկվող խումբ |
| **ԹՆՕ** | թմրամիջոցների ներարկային օգտագործող |
| **ԿՍԿ** | կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին |
| **ՀՀ** | Հայաստանի Հանրապետություն |
| **ՁԻԱՀ** | ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ |
| **ՁԻԱՀ-ի ԿՀԿ** | ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն |
| **ՄԱԿ** | Միավորված ազգերի կազմակերպություն |
| **ՄԻԱՎ** | մարդու իմունային անբավարարության վիրուս |
| **ՄՄՁԸ** | մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանք |
| **SUS** | տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդ |

# Բովանդակություն


Ամփոփում ............ 4

Ներածություն ............ 4

1. Հետազոտության նպատակները ............ 8

2. Մեթոդաբանություն ............ 9

3. Հետազոտության մասնակցության գործընթացը. առաջնային այց ............ 17

4. Հետազոտության մասնակցության գործընթացը. հետագա այց ............ 21

5. Հետազոտությունն իրականացնող կազմակերպությունների և ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի դերը և պարտականությունները ............ 23

6. Ընդգրկման նկարագրությունը ............ 25

7. Տվյալների հավաքագրում ............ 27

8. Մոնիտորինգ և որակի ապահովում ............ 28

9. Տվյալների մշակում և վերլուծություն ............ 29

10. Էթիկական հարցեր ............ 29

11. ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների խմբերի չափերի գնահատում ............ 30

12. Ժամանակացույց ............ 35

13. Հետազոտության արդյունքների տարածում ............ 35

Հավելված 1 ............ 36

Հավելված 2 ............ 38

Հավելված 3 ............ 54

Հավելված 4 ............ 66

Հավելված 5 ............ 81

Հավելված 6 ............ 83

Հավելված 7 ............ 84

Հավելված 8 ............ 85

Հավելված 9 ............ 87

Հավելված 10 ............ 88

Հավելված 11 ............ 90

Հավելված 12ա ............ 91

Հավելված 12բ ............ 93

Հավելված 12գ ............ 94

## Ամփոփում

Սույն ուղեցույցում նկարագրված է թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ), կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց (ԿՍԿ) և տղամարդու հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդկանց (SUS) շրջանում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի մեթոդով (ՄՄՁԸ) ՄԻԱՎ վարակի տարածվածության և ռիսկային վարքագծի վերաբերյալ անցկացվելիք հետազոտության ընթացքը: Հետազոտությունը հնարավորություն կտա ստանալու լրացուցիչ տվյալներ Հայաստանում ՄԻԱՎ վարակի համաճարակը բնութագրող հիմնական ցուցանիշների միտումների վերլուծության համար:


## 1. Ներածություն

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ առավել վտանգի ենթարկվող խմբերի (ԱՎԵԽ)՝ ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում Հայաստանի Հանրապետությունում անցկացվել են պարբերաբար՝ սկսած 2000 թվականից: Նշված խմբերի շրջանում ՄԻԱՎ վարակի, սեռավարակների, ռիսկային վարքագծի, ծրագրային ծածկույթի համակցված գնահատում անցկացվել է 2010թ., 2012թ. և 2014թ.՝ օգտագործելով մասնակիցների միջոցով ձևավորվող ընտրանքի (ՄՄՁԸ) մեթոդը: Սա կլինի նույն մեթոդաբանությամբ անցկացված չորրորդ հետազոտությունը, ինչը հնարավորություն կտա գնահատելու ՄԻԱՎ վարակի և այլ վարակների տարածվածության և ռիսկային վարքագծի փոփոխության միտումները:

Առավել վտանգի ենթարկվող խմբերի շրջանում 2010թ., 2012թ. և 2014թ. Երևանում անցկացված կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները ցույց են տվել ՄԻԱՎ վարակի տարածվածության նվազման միտում հետազոտված բոլոր խմբերում (գծապատկեր 1): ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունն ամենաբարձրն է եղել 2010թ.՝ 10,7%, 2014թ. այն կազմել է 4%: SUS-ների շրջանում տարածվածությունն ամենաբարձրն է եղել 2012թ.՝ 2,6%, 2014թ. այն կազմել է 0,4%: ԿՍԿ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը 2010թ. և 2012թ. կազմել է համապատասխանաբար 1,2% և 1,3%, իսկ 2014թ. անցկացված կենսաբանական և վարքագծային հետազոտությունների ժամանակ նշված խմբի շրջանում ՄԻԱՎ վարակի որևէ դեպք չի արձանագրվել:

**Գծապատկեր 1.** *ՄԻԱՎ վարակի տարածվածությունն ԱՎԵԽ-ների շրջանում 2010-2014թթ., ք.Երևան*




ԹՆՕ-ների շրջանում հեպատիտ Ց-ի տարածվածությունը համեմատաբար կայուն էր՝ 52%-ի սահմաններում (աղյուսակ 1): Սիֆիլիսի տարածվածությունը նույնպես կայուն էր՝ 2014թ. կազմելով 3,7%:

**Աղյուսակ 1.** *ԹՆՕ-ների շրջանում կենսաբանական հետազոտությունների արդյունքները, 2010-2014թթ.*

| ԹՆՕ | 2010 | 2012 | 2014 |
|---|---|---|---|
| **ՄԻԱՎ վարակի տարածվածությունը** | 10,7% | 6,3% | 4,0% |
| **Հեպատիտ Ց-ի տարածվածությունը** | 36,9% | 52,6% | 52,1% |
| **Սիֆիլիսի տարածվածությունը** | 4,2% | 0,8% | 3,7% |

SUS-ների շրջանում հեպատիտ Բ-ի տարածվածությունը 2014թ. կազմել է 1,1%, սիֆիլիսի տարածվածությունը՝ 1,8% (աղյուսակ 2):

**Աղյուսակ 2.** *SUS-ների շրջանում կենսաբանական հետազոտությունների արդյունքները, 2010-2014թթ.*

| SUS | 2010 | 2012 | 2014 |
|---|---|---|---|
| **ՄԻԱՎ վարակի տարածվածությունը** | 2,3% | 2,6% | 0,4% |
| **Հեպատիտ Բ-ի տարածվածությունը** | 1,3% | 1,9% | 1,8% |
| **Սիֆիլիսի տարածվածությունը** | 4,1% | 0,6% | 1,1% |

ԿՍԿ-ների շրջանում 2014թ. գոնորեայի տարածվածությունը կազմել է 3,8%, սիֆիլիսի տարածվածությունը՝ 0,8% (աղյուսակ 3): Վերջին երկու հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս տրիխոմոնիազի համեմատաբար կայուն տարածվածություն, որը 20-22%-ի սահմաններում է:

**Աղյուսակ 3.** *ԿՍԿ-ների շրջանում կենսաբանական հետազոտությունների արդյունքները, 2010-2014թթ.*

| ԿՍԿ | 2010 | 2012 | 2014 |
|---|---|---|---|
| **ՄԻԱՎ վարակի տարածվածությունը** | 1,2% | 1,3% | - |
| **Սիֆիլիսի տարածվածությունը** | 3,1% | 4,3% | 0,8% |
| **Տրիխոմոնիազի տարածվածությունը** | 7,1% | 22,5% | 20,8% |
| **Գոնորեայի տարածվածությունը** | 11,0% | 6,6% | 3,8% |

Եթե ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ԹՆՕ-ների ընդգրկվածության ցուցանիշը վերջին 5 տարիների ընթացքում նվազել է՝ 2014թ. կազմելով 6,3%, ապա ստերիլ ասեղի ու ներարկիչի օգտագործման և ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների ցուցանիշներն աճել են՝ 2014թ. կազմելով համապատասխանաբար 96,9% և 63,7% (գծապատկեր 2): Ավելին, ստերիլ ասեղի և ներարկիչի օգտագործման ցուցանիշը բավականին բարձր է, իսկ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման ցուցանիշը գրեթե նույն մակարդակին է և կազմել է 44%:

**Գծապատկեր 2.** *ԹՆՕ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2010-2014թթ., ք.Երևան*




ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում SUS-ների ընդգրկվածության ցուցանիշը փոքր ինչ նվազել է՝ 2014թ. կազմելով 53,5%, իսկ ՄԻԱՎ վարակի

կանխարգելման վերաբերյալ գիտելիքների ցուցանիշը մոտ 1,5 անգամ աճել է՝ հասնելով մոտ 79%-ի: Անալ վերջին հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման ցուցանիշն ընդհանուր առմամբ կայուն է և գտնվում է 65%-ի սահմաններում (գծապատկեր 3):

**Գծապատկեր 3.** *SUS-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները 2010-2014թթ., ք.Երևան*




ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերում ԿՍԿ-ների ընդգրկվածության ցուցանիշը զգալիորեն աճել է, իսկ ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների ցուցանիշը՝ փոքր-ինչ: ԿՍԿ-ների շրջանում կայուն բարձր է կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման ցուցանիշը, որը 2014թ. կազմել է մոտ 94% (գծապատկեր 4):

**Գծապատկեր 4.** *ԿՍԿ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների արդյունքները, 2010-2014թթ., ք.Երևան*



ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և ՏՍՏ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ռիսկային վարքագծի հիմնական բնութագրիչների միտումները գնահատելու, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ընթացիկ ազգային ծրագրի արդյունքի և ազդեցության ցուցանիշների կառուցման, և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման հետագա ազգային ծրագրի ելակետային տվյալների ստացման, խմբերի չափերի գնահատման համար տվյալներ ստանալու համար նախատեսվում է իրականացնել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ նշված խմբերի շրջանում:

## 2. Հետազոտության նպատակները

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություն-ների հիմնական նպատակներն են հետազոտության բոլոր տեղամասերում ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և ՏՍՏ-ների շրջանում գնահատել՝

- ՄԻԱՎ վարակի տարածվածությունը,
- կանխարգելման ծրագրերի ծածկույթը,
- խմբերի չափերը:

Հետազոտության նպատակներն են նաև գնահատել՝

- հեպատիտ Ց-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում,
- սիֆիլիսի, տրիխոմոնիազի, գոնորեայի և քլամիդիոզի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում,
- հեպատիտ Բ-ի տարածվածությունը ՏՍՏ-ների շրջանում,
- սիֆիլիսի տարածվածությունը ԹՆՕ-ների և ՏՍՏ-ների շրջանում:

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտության արդյունքում ստացված տվյալները կօգտագործվեն՝

- իրականացված կանխարգելիչ ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար,
- ադվոկացիայի և ռազմավարությունների մշակման համար,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման հետագա ազգային ծրագրի ելակետային ցուցանիշների կառուցման համար,
- գործող ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի ազդեցության և արդյունքի ցուցանիշների հաշվարկման համար,
- ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի մոդելավորման համար:

## 3. Մեթոդաբանություն

### 3.1 Աշխարհագրական վայրեր և բնակչություն

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում կիրականացվեն կենսաբանական և վարքագծային հետազոտություններ ՄՄՁԸ-ի մեթոդով: Հետազոտությունները կանցկացվեն Հայաստանի երեք քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում, որտեղ բնակվում է երկրի բնակչության 42,2%-ը:

### 3.2 Ընտրանք

Մասնակիցները կընտրվեն ՄՄՁԸ-ի միջոցով: ՄՄՁԸ-ն շղթայական ուղղորդման ընտրանքի տեսակ է՝ մշակված դժվարհասանելի խմբերի ընտրանք ձևավորելու համար: Այն նվազեցնում է սխալները, որոնք սովորաբար հանդիպում են շղթայական ուղղորդման այլ մեթոդներում՝ կիրառելով «հավասարը հավասարին» ընդգրկման սահմանափակ համակարգ (մասնակիցները կարող են ընդգրկել մինչև երեք մասնակից՝ նվազեցնելով այն մարդկանց գերներկայացվածությունը, որոնք ունեն մեծ ցանցեր): Սա հանգեցնում է մասնակիցների ընդգրկման երկար շղթաների, հետևաբար նվազեցնում է ոչ պատահականորեն ընտրված սկզբնական մասնակիցների սխալը և հնարավորություն տալիս ավելի խորը ներթափանցելու թիրախային խմբի ցանց: Բացի այդ, ՄՄՁԸ-ն ենթադրում է ընտրանք ցանցից, ոչ թե խմբից: Վերլուծությունը ներառում է տվյալների կշռում ցանցի չափով այնպես, որ նրանք, ովքեր ունեն ավելի մեծ ցանցեր, ստանան ավելի քիչ կշիռ, և նրանք, ովքեր ունեն ավելի փոքր ցանց, ստանան ավելի մեծ կշիռ: Յուրաքանչյուր մասնակից կպատասխանի իր սոցիալական ցանցի չափի վերաբերյալ հարցերին, որոնք ներառում են ընդգրկման բոլոր չափանիշները:

Հիմնվելով առկա կապերի վրա և խորհրդակցելով ԱՎԵԽ-ներին ծառայություններ տրամադրող տեղական ՀԿ-ների հետ՝ հետազոտություն իրականացնող անձնակազմը կընդգրկի թիրախային խմբի բազմազան և լավ ցանց ունեցող անդամների, որոնք կծառայեն որպես սերմեր (հետազոտության սկզբնական մասնակիցներ): Սերմերը կստանան խրախուսում հետազոտությանը մասնակցելու համար (առաջնային խրախուսում) և մեկ այլ խրախուսում խմբի այլ ներկայացուցիչներ հետազոտության մեջ ընդգրկելու համար (երկրորդային խրախուսում): Մասնակիցներին կտրամադրվի հատուկ համարներով մինչև երեք կտրոն՝ խմբի այլ անդամներ ընդգրկելու համար: Կտրոններ ստացած անդամները, որոնք կորոշեն օգտագործել դրանք, կգնան ֆիքսված տեղամաս հետազոտությանը մասնակցելու համար: Կտրոնները պարունակում են տեղեկատվություն հետազոտության տեղամասի, մասնակցության

ժամերի և հիմնական նպատակների մասին: Սերմերը և հաջորդաբար ընդգրկված մասնակիցները, որոնք ներկայանում են հետազոտության տեղամաս, անցնում են սկրինինգ ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության վերաբերյալ և հետազոտության նպատակների, հնարավոր վտանգների և օգուտների, անանունության և գաղտնիության մասին մանրամասն բացատրություն ստանալուց հետո (մասնակցության դեպքում) տալիս են տեղեկացված համաձայնություն: Այնուհետև անցնում են հարցազրույց՝ վարքագծային հարցաշարով, և կենսաբանական հետազոտություն՝ նախաթեստային խորհրդատվությամբ: Դրանից հետո յուրաքանչյուր մասնակցի (բացառությամբ նրանց, որոնք հետազոտության մեջ կընդգրկվեն դրա ավարտին) կտրվի մինչև երեք կտրոն խմբի այլ ներկայացուցիչների ընդգրկման համար: Սերմերի կողմից ընդգրկվող մասնակիցները կազմում են ընդգրկման առաջին ալիքը, առաջին ալիքում ընդգրկված մասնակիցները ստեղծում են երկրորդ ալիքը և այդպես շարունակ: Լավագույն դեպքում մեկ ընդգրկման շղթայում (սերմը և նրա կողմից ընդգրկվածները) պետք է լինեն ընդգրկման բազմաթիվ ալիքներ (>10):

**Սերմեր**

Եթե ցանցային ընտրանքը կենտրոնանա մեկ ենթախմբում, ապա ստացված արդյունքները կարող են լինել ոչ ներկայացուցչական: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է, որ սերմերն ունենան սոցիալական մեծ ցանցեր և ճանաչեն բազմապիսի մարդկանց: Բնութագրիչները, որոնք կարող են լինել առավել խնդրահարույց որոշակի ցանցում, պետք է առանձնահատուկ գնահատվեն հետազոտության արդյունքների վերլուծության ժամանակ: Լավագույն մոտեցումն է գտնել սերմեր, որոնք կիմանան և կներգրավեն բազմապիսի մարդկանց: Հետազոտողները կարող են ուղղորդել սերմերին իրենց սոցիալական ցանցից բազմապիսի մարդկանց հետազոտության մեջ ընդգրկելու հարցում: Բազմազանության ապահովման համար հարկավոր է հաշվի առնել քաղաքներում բնակության վայրերը (թաղամասեր), տարիքը (երիտասարդ և տարիքով), սոցիալ-տնտեսական վիճակը, ՄԻԱՎ-ով վարակման վտանգի աստիճանը (բարձր կամ ցածր ռիսկ), ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակը, ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շահառու լինել-չլինելը և այլն: Սերմերը պետք է ընտրվեն՝ ըստ բազմապիսի մարդկանց ընդգրկելու հնարավորության: Ըստ առանձին խմբերի՝ լրացուցիչ բնութագրիչներ պետք է լինեն.

*SUS-ների համար՝*

- կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրողներ և նման ծառայություններ չտրամադրողներ,
- ակտիվ զուգընկեր և պասիվ զուգընկեր,
- բիսեքսուալ, հոմոսեքսուալ, հետերոսեքսուալ, տրանսգենդեր և այլն,

- կանանց հետ սեռական հարաբերություններ ունեցողներ և նման հարաբերություններ չունեցողներ,
- կնոջ հետ ամուսնացած և չամուսնացած:

<u>*ԿՍԿ-ների համար*</u>՝

- կոմերցիոն ծառայությունների տրամադրման վայրը, հաճախորդներ գտնելու վայրը,
- թմրամիջոցների գործածումը, թմրամիջոցների ներարկային գործածումը,
- ՄԻԱՎ-ով վարակման վտանգի աստիճանը՝ բարձր ռիսկ և ցածր ռիսկ:

<u>*ԹՆՕ-ների համար*</u>՝

- գործածվող թմրամիջոցի տեսակը,
- թմրամիջոցների ներարկման պարագաների համատեղ օգտագործումը և չօգտագործումը,
- ռիսկային սեռական վարքագիծ:

**Սկրինինգ**

Հետազոտությունն իրականացնող անձնակազմի կողմից կստուգվի թեկնածուների համապատասխանությունն ընդգրկման չափանիշներին: Սկրինինգը կներառի նաև կտրոնի վավերականության ստուգումը (բացառությամբ սերմերի), հետազոտության մեջ չներառելու խոչընդոտների առկայությունը՝ թմրամիջոց-ների/ալկոհոլի ազդեցության տակ լինելը կամ այլ պատճառ, երբ թեկնածուն ընդունակ չէ տալու տեղեկացված համաձայնություն և անցնելու հարցազրույց: Ընդգրկվելու չափանիշներին չհամապատասխանող անձից անձնակազմի անդամը կվերցնի կտրոնը և կխնդրի նրան հեռանալ: Եթե որևէ մեկը ներկայանա հետազոտության տեղամաս առանց կտրոնի, անձնակազմի անդամը կներկայացնի հետազոտությանը մասնակցելու կարգը և կտեղեկացնի, որ նա կարող է կտրոն վերցնել խմբի այլ անդամից:

**Կտրոններ**

Հետազոտության վերոնշյալ քայլերն անցած մասնակիցներին (բացառությամբ հետազոտության վերջում ներգրավվածների), ներառյալ սերմերը, կտրվի առավելագույնը երեք կտրոն՝ նոր մասնակիցներ ընդգրկելու համար: Յուրաքանչյուր կտրոն կունենա հատուկ նույնականացման համար, որը հնարավորություն կտա կապելու վարքագծային և կենսաբանական տվյալները, նաև կապելու ընդգրկողին ընդգրկվողի հետ(անհրաժեշտ տեղեկատվություն տվյալների վերլուծության համար): Կտրոնները կազմված կլինեն երկու մասերից, որոնք հեշտությամբ կբաժանվեն (հավելված 1): Կտրոնի մի մասը՝ «ուղղորդման» կտրոնը, ընդգրկողն օգտագործելու է

խմբի ներկայացուցչին հետազոտության մեջ ներառելու համար: Ընդգրկվողն օգտագործելու է այդ մասը հետազոտությանը մասնակցելու համար: Կտրոնի մյուս մասը՝ «վճարման» կտրոնը, ներկայացվելու է ընդգրկողի կողմից՝ խմբի նոր ներկայացուցիչ ընդգրկելու համար խրախուսում ստանալու նպատակով: Ընդգրկողը կարող է ստանալ խրախուսումն այն բանից հետո, երբ խմբի ընդգրկված ներկայացուցիչը մարի կտրոնը՝ անցնելով հետազոտության բոլոր քայլերը:

Եթե հետազոտության համար մասնակիցների ընդգրկումն ընթանա արագ, տրամադրվող կտրոնների թիվը կնվազեցվի 3-ից 2-ի, անհրաժեշտության դեպքում՝ 2-ից 1-ի: Սա կապահովի ընդգրկման երկար շղթաներ և նվազագույն ճյուղավորում: Ընդգրկման գործընթացը կվերահսկվի համակարգողի կողմից՝ օգտագործելով Excel համակարգչային ծրագրով լրացվող աղյուսակը, որը կներառի հետևյալ տվյալները՝ ներգրավման ամսաթիվ, կտրոնի վավերականության ժամկետ, ընդգրկող-ընդգրկվող կապ (կտրոնների հատուկ համարների հիման վրա):

**Խրախուսումներ**

Հետազոտության բոլոր մասնակիցները կստանան առաջնային խրախուսում (3500 դրամին համարժեք) հետազոտությանը մասնակցելու համար: Մասնակիցները, որոնք կընդգրկեն իրենց խմբի նոր ներկայացուցիչներ, հետազոտությանը նրանց մասնակցելուց հետո կստանան երկրորդային խրախուսում (յուրաքանչյուր մասնակցի համար 1600 դրամին համարժեք):

## 3.3 Հիմնական հասկացություններ

1. **Մասնակից**. տեղեկացված համաձայնություն տված և հետազոտության մեջ ներառված ԹՆՕ-ներ, ԿՍԿ-ներ և SUS-ներ:
2. **Ընդգրկող.** ԿՍԿ-ներ, ԹՆՕ-ներ և SUS-ներ, որոնք ավարտել են հետազոտության գործընթացը և ստացել «ուղղորդման» կտրոններ:
3. **Ընդգրկվող.** ԹՆՕ-ներ, ԿՍԿ-ներ և SUS-ներ, որոնք ներառվել են ընդգրկողի կողմից, բայց դեռ չեն մասնակցել հետազոտությանը (մասնակից):
4. **Սերմ.** մասնակից, որին ընդգրկել է հետազոտությունն իրականացնող անձնակազմը, ոչ թե խմբի այլ ներկայացուցիչ: Սերմերը ՄՄԶԸ շղթայական ընդգրկման գործընթացի նախաձեռնողներն են:
5. **Ալիք**. աստիճանը կամ հեռավորությունը սերմից՝ ընդգրկման տեսանկյունից: Անմիջականորեն սերմերի կողմից ընդգրկված ԹՆՕ-ները, ԿՍԿ-ներն ու SUS-ները առաջին ալիքում են: Առաջին ալիքում ընդգրկված մասնակիցների կողմից ընդգրկված ԹՆՕ-ները, ԿՍԿ-ներն ու SUS-ները երկրորդ ալիքի անդամներ են և այդպես շարունակ:

## 3.4 Հետազոտության մեջ ընդգրկվելու չափանիշները

Բոլոր խմբերում կլինի հետազոտության մասնակիցների երկու տեսակ՝

1. առաջնային մասնակիցներ՝ ընդգրկված անձնակազմի կողմից (սերմեր),
2. հետազոտության մասնակիցներ՝ ընդգրկված իրենց խմբի ներկայացուցիչների կողմից:

Ընդգրկման չափանիշները նույնն են սերմերի և խմբի ներկայացուցիչների կողմից ընդգրկվածների համար: Դրանք են՝

- **ԹՆՕ-ներ՝** անձինք (արական և իգական սեռի), որոնք օգտագործել են թմրամիջոցներ ներարկային ճանապարհով վերջին 3 ամիսների ընթացքում, 18 տարեկան և ավելի են, հետազոտման տեղամասի բնակիչներ են (նվազագույնը մեկ տարի), ունեն հետազոտությանը մասնակցելու ցանկություն և տվել են իրենց տեղեկացված համաձայնությունը:
- **ԿՍԿ-ներ՝** կանայք, որոնք տրամադրել են կոմերցիոն սեռական ծառայություններ (հեշտոցային կամ անալ) վերջին 3 ամիսների ընթացքում, 18 տարեկան և ավելի են, հետազոտման տեղամասի բնակիչներ են (նվազագույնը մեկ տարի), ունեն հետազոտությանը մասնակցելու ցանկություն և տվել են իրենց տեղեկացված համաձայնությունը:
- **SUS-ներ՝** տղամարդիկ, որոնք ունեցել են անալ սեռական հարաբերություններ արական սեռի զուգընկերոջ հետ վերջին 12 ամիսների ընթացքում, 18 տարեկան և ավելի են, հետազոտման տեղամասի բնակիչներ են (նվազագույնը մեկ տարի), ունեն հետազոտությանը մասնակցելու ցանկություն և տվել են իրենց տեղեկացված համաձայնությունը:

Ընդգրկման չափանիշները կօգտագործվեն նաև յուրաքանչյուր մասնակցի սոցիալական ցանցի չափի վերաբերյալ հարցի գնահատման համար (անհրաժեշտ է տվյալների վերլուծության համար):

## 3.5 Բացառման չափանիշներ

- Տարիքը՝ 18-ից ցածր
- Թմրամիջոցների կամ ալկոհոլի ազդեցության տակ գտնվելը

## 3.6 Հետազոտության մեջ ընդգրկում

1. *Սերմերի ընդգրկումը.* Գյումրիում և Վանաձորում ՄՄՁԸ-ն բոլոր ԱՎԵԽ-ների համար կանցկացվի 2, Երևանում՝ 5-6 սերմերի միջոցով: Նախապատրաստական

աշխատանքների ընթացքում կորոշակիացվեն այն ԹՆՕ-ները, ԿՍԿ-ներն ու ՏՍՏ-ները, որոնք կարող են ընդգրկվել որպես սերմեր: Նրանք պետք է՝

- ունենան լավ ցանց իրենց խմբի այլ ներկայացուցիչների հետ,
- լինեն ընդունված և վստահելի խմբի այլ ներկայացուցիչների կողմից,
- ցանկություն ունենան մասնակցելու հետազոտությանը,
- ցանկանան և ունենան հնարավորություն ընդգրկելու բազմապիսի մարդկանց:

Յուրաքանչյուր սերմ կստանա կտրոն (հավելված 1), որում նշված կլինեն հարցազրույցի ամսաթիվը, ժամը և վայրը, վավերականության ժամկետը: Կտրոնի վավերականության ժամանակահատվածում հանդիպումը չկայանալու դեպքում անձնակազմը պետք է ներգրավի նոր սերմ:

2. *Մասնակիցների ընդգրկումը:* Մասնակիցների առաջին ալիքը կձևավորվի սերմերի կողմից: Այնուհետև յուրաքանչյուր մասնակցի կառաջարկվի դառնալ ընդգրկող: Օրինակ՝ նրան կխնդրեն. «Խնդրում ենք տալ կտրոնը վերջին երեք ամիսների ընթացքում ներարկման միջոցով թմրամիջոց գործածած մարդուն, որին գիտեք, և որը գիտի ձեզ»: Ընդգրկող դառնալու ցանկություն հայտնած մասնակցին կտրվի մինչև երեք կտրոն՝ նոր մասնակիցներ ներգրավելու համար: Ընդգրկող դառնալը լիովին կամավոր է, անգամ դրանից հրաժարվելու դեպքում մասնակիցը կստանա հետազոտությանը մասնակցելու համար նախատեսված խրախուսումը:
3. *Կենսաչափական տվյալների կիրառումը:* Կենսաչափական տվյալները կօգտագործվեն՝ ընդգրկվողների հնարավոր կրկնակի մասնակցությունը կանխելու համար: Կնշվեն մասնակիցների հասակը, քաշը, մազերի, աչքերի գույնը, տեսանելի սպիներն ու դաջվածքները:

## 3.7 Ընտրանքի չափը

Հետազոտության համար խմբերի ընտրանքի չափը հաշվարկվել է խմբի ընդհանուր չափի հիման վրա:

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններում ընդգրկվելիք խմբերի ընտրանքի չափը ներկայացված է աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** *ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններում ընդգրկվելիք խմբերի ընտրանքի չափը՝ ըստ քաղաքների:*

| Խումբ | Երևան (n) | Գյումրի (n) | Վանաձոր (n) |
|---|---|---|---|
| **ԹՆՕ** | 300 | 100 | 100 |
| **ԿՍԿ** | 300 | 100 | 100 |
| **SUS** | 300 | 100 | 100 |

Ընտրանքի չափը հաշվարկվում է 5% սահմանային սխալով, 95% վստահությամբ, Երևանում յուրաքանչյուր խմբի ընտրանքի չափով և պատասխանների բաշխումով՝ օգտագործելով միջինը 60-70%: Օգտագործելով այս միջոցները՝ n ընտրանքի չափը և E սահմանային սխալը տրվում են.

x = Z(c/100) 2r (100-r)

n = N x/ ((N-1)E2 + x)

E = Sqrt [(N - n)x/n(N-1)]

Որտեղ՝

N-ը խմբի չափն է,

r-ը՝ պատասխանների մասը, որը հետաքրքիր է,

Z(c/100)-ը կրիտիկական արժեքն է c վստահության մակարդակի համար:

Այս հաշվարկների հիման վրա ԹՆՕ-ների, SUS-ների և ԿՍԿ-ների ընտրանքի չափը Երևանում 300-ական է: Վանաձորում և Գյումրիում ընտրանքի չափի հաշվարկը կատարվել է այդ խմբերի ընդհանուր չափերի և նախկինում անցկացված նմանատիպ հետազոտության փորձի հիման վրա: Ընտրանքի չափերն այս քաղաքներում կազմում են խմբի ընդհանուր չափի ավելի քան 20%-ը:

## 3.8 Կտրոնների կառավարում

Կտրոնների տրամադրումն ու ընդունումը կենթարկվի մոնիտորինգի էլեկտրոնային ձևաչափով: Սերմերին և մասնակիցներին կտրվի մինչև երեք կտրոն՝ կախված մարված կտրոնների թվից: Ընտրանքի զարգացմանը զուգընթաց տրամադրվող կտրոնների թիվը կնվազի՝ հասնելով երկուսի, և ավելի ուշ՝ մեկի: Երբ ընտրանքի չափը մոտենա թիրախին, այլևս որևէ կտրոն չի տրվի նոր ընդգրկվածներին: Նպատակն է հետազոտությունը սկսել որքան հնարավոր է քիչ սերմերով և ստեղծել ընդգրկման երկար շղթաներ 10-ից ավելի ալիքներով:

Կտրոնների վրա նշված կլինեն՝

- կտրոնի համարը,
- հետազոտության անվանումը (թիրախային խումբը և հստակ նպատակը չեն նշվի),
- հետազոտության տեղամասի հասցեն,
- հետազոտության անձնակազմի կոնտակտային տվյալները,
- հետազոտության տեղամասի աշխատանքի օրերն ու ժամերը,
- կտրոնի ակտիվացման ամսաթիվը (օր, որից ավելի շուտ կտրոնը չի կարող օգտագործվել): Կտրոնի ակտիվացման ամսաթիվը կարող է տատանվել: Սկզբում այն կարելի է սահմանել կտրոնի տրամադրումից երկու օր անց: Հետազոտության համակարգողի հայեցողությամբ մինչև կտրոնի ակտիվացման օրը ներկայացած ընդգրկվողները կարող են ներառվել հետազոտության մեջ:
- կտրոնի վավերականության ժամկետը, որից հետո կտրոնը չի կարող օգտագործվել: Սկզբում կտրոնները վավերական կլինեն երկու շաբաթ: Այս ժամանակահատվածը կարող է երկարացվել կամ կրճատվել, եթե կտրոնների վերադարձի մակարդակը լինի սպասվածից ցածր կամ բարձր, և երբ ընտրանքի չափը մոտենա թիրախին: Հետազոտության համակարգողի հայեցողությամբ վավերականության ժամկետը լրացած կտրոններով ներկայացած ընդգրկվողները կարող են ներառվել հետազոտության մեջ:
- առաջնային այցի ամսաթիվը և ժամը,
- կտրոնի վերադարձման ամսաթիվը, որը նշվում է, երբ կտրոնը մարվում է (կտրոնների մենեջերի կողմից),
- տեղեկատվություն կտրոնի օգտագործման և դրա վավեր լինելու մասին:

<u>*Կտրոնի ձևը*</u>

Տեղեկատվությունը կտրոնի վրա կլինի հայերեն: Կտրոնները կարող են լինել գունավոր և/կամ այլ ձևի յուրաքանչյուր խմբի համար: Չափը և ձևը նման կլինեն թղթադրամի (հավելված 1):

Կտրոնը կհամարվի անվավեր, եթե ժամկետանց է, կեղծված կամ արդեն օգտագործված: Անվավեր կտրոնները կվերցվեն և կնշվեն որպես «անվավեր»: Ընդգրկվելու չափանիշներին համապատասխանող ընդգրկվողների վավեր կտրոնները կվերցվեն և կնշվեն որպես «օգտագործված»: Որևէ պատճառով ընդգրկվողի կրկնակի այցի անհրաժեշտություն առաջանալիս կտրոնը կվերադարձվի նրան: Կրկնակի այցի ամսաթիվը կտրոնի վավերականության ժամկետից հետո լինելու դեպքում կտրոնը անվավեր չի համարվի:

*Նույնականացման համարներ*

Նույնականացման համարներն անհրաժեշտ են վարքագծային և կենսաբանական հետազոտությունների միջև կապ հաստատելու համար՝ առանց անձի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման: Կօգտագործվեն նույնականացման համարների մի քանի ձևեր: Կտրոնների համարակալման համակարգը կլինի համակարգված՝ հնարավորություն տալով հետազոտող խմբին հետևելու յուրաքանչյուր սերմի ալիքներին ու շղթաներին (լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս LG Johnston. Introduction to Respondent Driven Sampling. 2013 World Health Organization. հասանելի է http://applications.emro.who.int/dsaf/EMRPUB_2013_EN_1539.pdf)

## 4. Հետազոտության մասնակցության գործընթացը. առաջնային այց

### 4.1 Հսկման թերթիկ

Հսկման թերթիկը (հավելված 8) կլրացվի կտրոնը ներկայացնող բոլոր հնարավոր ընդգրկվողների համար: Այն կօգտագործվի հետազոտության տեղամասում մասնակիցների հետազոտությանը մասնակցելու գործընթացը գրանցելու համար, ներառյալ կտրոնների վավերականությունը, ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության ստուգումը, կենսաչափական տվյալների գրանցումը, տեղեկացված համաձայնության ստացումը, հարցազրույցի անցկացումը, նախաթեստային խորհրդատվության տրամադրումը, կենսանյութի նմուշառումը, այլ մանակիցների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը: Հսկման թերթիկը նաև կներառի հետագա այցի ամսաթիվը և ընդգրկվողի կտրոնի համարը: Անձնակազմը կստորագրի հսկման թերթիկը համապատասխան աշխատանքի ավարտը ցույց տալու համար մինչև ընդգրկվողի ուղեկցումը հետազոտության հաջորդ փուլն անցնելու համար: Մինչ ընդգրկվողը կհեռանա տեղամասից, կտրոնների մենեջերը կամ անձնակազմի այլ ներկայացուցիչներ կհավաքագրեն, կստորագրեն և կլրացնեն հսկման թերթիկը:

### 4.2 Հաղորդակցում ընդգրկվողների հետ

Տարբեր տեսակի տեղեկատվություն կներկայացվի ընդգրկվողին: Դրանց թվում են՝

- տեղեկատվական թերթիկ (թղթային),
- տեղեկատվություն հետազոտության գործընթացների մասին հետազոտության տեղամասում (լամինացված թղթի վրա),

- հետազոտության ժամանակ օգտագործվող հիմնական հասկացություններ,
- ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության մասին տեղեկատվություն (թղթային),
- տեղեկատվություն սեռավարակների և բուժման մասին (թղթային),
- տեղեկատվություն խմբի այլ ներկայացուցչի ընդգրկման վերաբերյալ (թղթային և բանավոր կտրոնների մենեջերի կողմից):

Մինչ տեղեկացված բանավոր համաձայնություն ստանալը, սկրիները կստուգի և կհաստատի ընդգրկվողի կողմից տրամադրվող տեղեկատվության ընկալումը և կպատասխանի հարցերին, որոնք կարող են ծագել ընդգրկվողի մոտ իրեն լսելուց կամ տեղեկատվական թերթիկը կարդալուց հետո: Յուրաքանչյուր գործընթացից առաջ անձնակազմը կհետաքրքրվի ընդգրկվողի մոտ հնարավոր հարցերի առկայության մասին և կկրկնի հիմնական կետերը:

## 4.3 Կտրոնի ստուգում և ընդգրկվելու չափանիշներին համապատասխա-նության գնահատում

Կտրոնների մենեջերը կուսումնասիրի հնարավոր ընդգրկվողի կողմից ներկայացված կտրոնը (ամսաթվերը, իսկությունը): Կենսաչափական տվյալները կհաստատեն, որ ընդգրկվողը նախկինում չի մասնակցել: Ընդգրկվողի համապատասխանությունը ընդգրկվելու չափանիշներին կգնահատվի կարճ հարցազրույցի միջոցով: Ընդգրկվելու չափանիշների վերաբերյալ կասկածներ առաջանալիս անձնակազմը կամ հիմնական խմբերի ներկայացուցիչ կամավորները կտան լրացուցիչ (ոչ ստանդարտացված) հարցեր համապատասխանությունը հաստատելու համար: Հսկման թերթիկը կօգտագործվի՝ ցույց տալու համար արդյոք ընդգրկվողը՝

1. ունի վավեր կտրոն (կցված հսկման թերթիկին),
2. ունի իրեն հատուկ կենսաչափական տվյալներ (չի ներկայացել նախկինում),
3. համապատասխանում է ընդգրկվելու չափանիշներին (ըստ սկրինինգային հարցազրույցի):

## 4.4 Տեղեկացված համաձայնություն

Ընդգրկվողները կկարողանան կարդալ տեղեկատվական թերթիկը/ համաձայնության ձևը: Տեղեկացված համաձայնությունը կլինի բանավոր և անանուն գաղտնիությունը ապահովելու և մասնակցությունը մեծացնելու համար: Տեղեկացված համաձայնությունը կվերաբերի հետազոտության ամբողջ գործընթացին: Տեղեկատվական թերթիկի մի օրինակ կտրվի բոլոր հնարավոր ընդգրկվողներին՝

անկախ մասնակցությունից (հավելված X): Հետազոտության անձնակազմը հսկման թերթիկում կկատարի նշում տեղեկացված համաձայնության ստացման մասին (հավելված X): Քանի որ մասնակիցներին կառաջարկվեն որոշ սեռավարակների վերաբերյալ հետազոտություններ, նրանց կտրամադրվեն տեղեկատվական նյութեր սեռավարակների և դրանց բուժման վերաբերյալ:

## 4.5 ՄԻԱՎ վարակի վերաբերյալ նախաթեստային խորհրդատվություն

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվությունը, հետազոտությունը և ուղղորդումը կիրականացվեն՝ համաձայն գործող ազգային ուղեցույցների և կարգերի: Նախաթեստային խորհրդատվությունը կներառի ՄԻԱՎ վարակի, ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքների բացատրությունը, ռիսկային վարքագծի, ինչպես նաև ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

## 4.6 ՄԻԱՎ վարակի, հեպատիտների և սեռավարակների վերաբերյալ առաջարկվող հետազոտությունները

Լաբորատոր հետազոտություններ կիրականացվեն հետևյալ կենսաբանական մարկերների վերաբերյալ՝

- ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն արագ թեստավորման մեթոդով ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում (մազանոթային արյուն),
- հեպատիտ Բ-ի վերաբերյալ ԻՖԱ մեթոդով հետազոտություն SUS-ների շրջանում (երակային արյուն),
- հեպատիտ Ց-ի վերաբերյալ ԻՖԱ մեթոդով հետազոտություն ԹՆՕ-ների շրջանում (երակային արյուն),
- սիֆիլիսի վերաբերյալ հետազոտություն ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների շրջանում (երակային արյուն),
- տրիխոմոնիազի, գոնորեայի և քլամիդիոզի վերաբերյալ հետազոտություն ՊՇՌ մեթոդով ԿՍԿ-ների շրջանում (հեշտոցային քսուք):

## 4.7 Լաբորատոր գործընթաց

Արյան նմուշառումը կկատարվի դաշտային աշխատանքների իրականացման տեղամասերում: Նմուշները կկոդավորվեն. բոլոր տվյալները և լրացված ձևերը կապված կլինեն կտրոնների համարների հետ:

Յուրաքանչյուր մասնակցից կվերցվի 5մլ երակային արյուն:

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտությունը կիրականացվի հետազոտության տեղամասում արագ թեստավորման մեթոդով: Հետազոտության բոլոր մասնակիցներին կտրամադրվի նախա- և հետթեստային խորհրդատվություն:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար սկզբնական փուլում կօգտագործվի SD Bioloine HIV1/2 3.0 թեստ-հավաքածուն, որը իմունաքրոմատոգրաֆիկ մեթոդով հետազոտության թեստ-հավաքածու է՝ շիճուկում, պլազմայում կամ ամբողջական արյան մեջ ՄԻԱՎ 1-ի (ներառյալ O ենթատիպ) և ՄԻԱՎ 2-ի դեմ հակամարմինների բոլոր իզոտիպերի (IgG, IgM, IgA) դիֆերենցիալ և որակական հայտնաբերման համար:

Տեղամասում արագ թեստի նախնական ՄԻԱՎ դրական արդյունքի դեպքում դաշտային աշխատանք իրականացնողը մասնակցին կուղեկցի ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ երկրորդ հետազոտության համար, որը կկատարվի ԻՖԱ մեթոդով 4-րդ սերնդի Ag-Ab թեստ-հավաքածուով: ԻՖԱ մեթոդով հետազոտության դրական արդյունքի դեպքում ՄԻԱՎ վարակի ախտորոշման նպատակով կկատարվի հետազոտություն NEW LAV-BLOT 1 թեստ-հավաքածուով: Ախտորոշում ստացած մասնակիցն անմիջապես կուղղորդվի ստանալու անհրաժեշտ բուժում և խնամք: Տեղամասի խորհրդատուն նախքան հետթեստային խորհրդատվություն տրամադրելը պետք է մասնակցի ՄԻԱՎ-ի վերաբերյալ արագ թեստավորման արդյունքի վերծանմանը:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունների որակը վերահսկելու նպատակով բացասական արդյունքով պատահականորեն ընտրված նմուշների 10%-ը կրկնակի կհետազոտվի ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի լաբորատորիայում: Բացառիկ դեպքերում և որոշ տեղամասերում ՄԻԱՎ-ի վերաբերյալ արագ թեստավորման անցկացման կասկածների դեպքում արյան նմուշները կհետազոտվեն ԻՖԱ 4-րդ սերնդի ՄԻԱՎ Ag-Ab թեստ-հավաքածուով ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նմուշները կտեղափոխվեն ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի լաբորատորիա 24-48 ժամվա ընթացքում՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված արյան նմուշառման, պահպանման և տեղափոխման գործընթացները կարգավորող ուղեցույցների և կարգի:

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում արյան փորձանմուշներից կանջատվի շիճուկը, որը կօգտագործվի նախատեսված մնացած հետազոտությունների համար:

Հեպատիտ Բ-ի վերաբերյալ հետազոտությունը կիրականացվի ԻՖԱ մեթոդով HBsAg թեստ-հավաքածուներով: Հեպատիտ Բ-ի նկատմամբ դրական արյան նմուշների կրկնակի հետազոտություն կանցկացվի կեղծ դրական արդյունքների հավանականությունը նվազեցնելու նպատակով:

Հեպատիտ Ց-ի վերաբերյալ հետազոտությունը կանցկացվի Anti-HCV ԻՖԱ թեստ-հավաքածուներով: Հեպատիտ Ց-ի նկատմամբ դրական արյան նմուշների կրկնակի

հետազոտում կանցկացվի կեղծ դրական արդյունքների հավանականությունը նվազեցնելու նպատակով:

Սիֆիլիսի վերաբերյալ հետազոտությունը կանցկացվի RPR թեստերով: Սիֆիլիս դրական արյան նմուշների կրկնակի հետազոտություն կանցկացվի TPHA թեստերով:

Տրիխոմոնիազի, գոնորեայի և քլամիդիոզի վերաբերյալ հետազոտությունները կկատարվեն ՊՇՌ մեթոդով:

## 4.8 Նմուշների պահպանումը հետազոտության տեղամասերում

Հետազոտության տեղամասերում արյան նմուշները կպահվեն 2-8°C-ում մինչև լաբորատոր հետազոտության համար ՁԻԱՀ-ի ԿՀԿ տեղափոխելը: Մյուս նմուշը՝ հեշտոցային քսուքը, կարող է պահվել տեղամասում 18-25°C-ում 48 ժամ կամ 2-8°C-ում՝ մինչև 7 օր:

## 4.9 Նմուշների տեղափոխումը

Նմուշները կտեղափոխվեն ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի կողմից տրամադրված պայուսակ-սառնարաններով (2-8°C) դրանց հավաքագրումից 24-48 ժամվա ընթացքում:

## 5. Հետազոտության մասնակցության գործընթացը. հետագա այց

Բոլոր ընդգրկվողներին կխնդրեն վերադառնալ հետազոտության տեղամաս՝

- տալու տեղեկատվություն նույն խմբի այլ ներկայացուցիչների թվի և բնութագրիչների մասին, որոնց իրենք առաջարկել են մասնակցել,
- ստանալու իրենց երկրորդային խրախուսումը,
- այլ վարակների վերաբերյալ իրենց հետազոտության արդյունքներն իմանալու և անհրաժեշտության դեպքում համապատասխան ծառայություններ ուղղորդվելու նպատակով:

## 5.1 Հետագա այցի ժամանակահատվածը

Հետագա այցերը պետք է պլանավորվեն այնպես, որ արդեն հավաքված լինեն «ուղղորդման» կտրոնները և պատրաստ լինեն լաբորատոր հետազոտությունների արդյունքները (սովորաբար առաջնային այցից երկու շաբաթ անց): Մինչ նշված օրը վերոնշյալ պայմանները կատարված չլինելու դեպքում մասնակիցներին կառաջարկվի կրկին այցելել տեղամաս մեկ այլ օր: Մասնակիցները, որոնք նշված օրից ուշ

կներկայանան, կընդունվեն (նրանց տրանսպորտային ծախսերը կհատուցվեն), սակայն առաջնահերթ կսպասարկվեն արդեն իսկ տվյալ օրվա և ժամի համար կանչված մասնակիցները: Հնարավոր է նաև պլանավորել նոր հանդիպում (օր/ժամ), որի հետ կապված տրանսպորտային ծախսերը կփոխհատուցվեն ավելի ուշ:

## 5.2 Վճարման կտրոնների հավաքագրումը, հետազոտությունից հրաժարվելու վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, երկրորդային խրախուսումներ

Վճարման կտրոնները կհավաքվեն և կլրացվեն: Կտրոնների մենեջերը կհարցնի մասնակցին, թե ընդգրկման չափանիշներին համապատասխանող քանի պոտենցիալ ընդգրկվողների է նա առաջարկել մասնակցել հետազոտությանը և որքան «ուղղորդման» կտրոն է բաժանել: Հետազոտությունից հրաժարվելու ձևի (հավելված բ) միջոցով կհավաքագրվի տեղեկատվություն նրանց մասին, որոնք հրաժարվել են վերցնել առաջարկված կտրոնը կամ վերցրել են այն, բայց չեն ներկայացել հետազոտության տեղամաս մինչև կտրոնի վավերականության ժամկետի ավարտը:

Մասնակիցները, որոնք կընդգրկեն իրենց խմբի նոր ներկայացուցիչներ, հետազոտությանը նրանց մասնակցելուց հետո կստանան երկրորդային խրախուսում:

## 5.3 ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետթեստային խորհրդատվություն

Հետթեստային խորհրդատվության ծավալը պայմանավորված կլինի ՄԻԱՎ վարակի վերաբերյալ մասնակիցների հետազոտության արդյունքից և ռիսկային վարքագծից: Խորհրդատվությունը կանցկացվի՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված կարգի: Հետթեստային խորհրդատվության ընթացքում կտրամադրվի տեղեկատվություն ռիսկային վարքագծի փոփոխման կարևորության, ուղիների ու միջոցների մասին (օրինակ՝ պահպանակի օգտագործում): ՄԻԱՎ-ով վարակված մասնակիցների խորհրդատվությունը կներառի հոգեբանա-սոցիալական կարիքների գնահատում, բուժմանը և խնամքին վերաբերող, խտրականությանն առնչվող հարցեր: Կքննարկվեն նաև զուգընկերներին ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման հարցեր: Պահպանակներ , հնարավոր է, նաև լուբրիկանտներ կտրամադրվեն անվճար:

### Հետագա ծառայություններ

Որոշ մասնակիցներ կարող են չներկայանալ պլանավորված հետագա հանդիպմանը: Հետազոտության տեղամասը բաց կլինի ևս մեկ շաբաթ ընտրանքի ավարտից հետո: Այդ ընթացքում մասնակիցները կարող են գալ և ստանալ իրենց

հետազոտության արդյունքները և ուղղորդվել հետագա բուժման ու խնամքի, ինչպես արդեն նկարագրվել է: Հետազոտության անձնակազմը կտրամադրի լաբորատոր հետազոտությունների արդյունքները մասնակցի նույնականացման համարի միջոցով և/ կամ կհաստատի նրա ինքնությունը կենսաչափական տվյալներով:

## 6. Հետազոտությունն իրականացնող կազմակերպությունների և ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի դերը և պարտականությունները

Առավել նպատակահարմար է, որ հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացնեն թիրախային խմբերին ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունները (ՀԿ), քանի որ դրանք ավելի տեղեկացված են խմբի ներկայացուցիչների ռիսկային վարքագծի հիմնական դրսևորումների վերաբերյալ և ունեն ավելի մեծ հասանելիություն այդ խմբերին: Հետազոտությունն անցկացնելու համար ՀԿ-ների ընտրությունը պետք է լինի հիմնավորված, ներառի բոլոր հասանելի ՀԿ-ներին և լինի թափանցիկ:

**ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ի պարտականությունները**

1. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն յուրաքանչյուր տեղամասի համար կընդգրկի համակարգող՝ ամենօրյա հսկողության և մոնիտորինգի համար:
2. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն կանցկացնի վարժանք ՀԿ-ների անձնակազմի համար և կտրամադրի մեթոդաբանական օգնություն:
3. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն կիրականացնի հետազոտության տեղամասերի ամենօրյա մոնիտորինգ՝ ապահովելու, որ ՀԿ-ների կողմից իրականացվող բոլոր աշխատանքները համապատասխանեն սույն ուղեցույցի, ինչպես նաև ՀՀ ԱՆ կողմից հաստատված այլ նորմատիվային փաստաթղթերի պահանջներին:
4. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն կիրականացնի տեղամասերում հավաքագրված կենսաբանական նմուշների տեղափոխումը ՁԻԱՀ-ի ԿՀԿ:
5. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն կիրականացնի լաբորատոր հաստատման հետազոտություններ՝ ըստ հաստատված ալգորիթմի:
6. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն պարբերաբար կտրամադրի տեխնիկական և մեթոդական աջակցություն, կիրականացնի հետազոտության ընթացքի ընդհանուր վերահսկում և մոնիտորինգ:

**ՀԿ-ների պարտականությունները**

1. Կենսաբանական և վարքագծային հետազոտությունների դաշտային աշխատանքներն իրականացնելիս ՀԿ-ները պետք է առաջնորդվեն սույն ուղեցույցով:

2. Իրականացնողը պետք է առաջարկի սկրինինգի, արյան նմուշառման և հետազոտության, հարցազրույցի, համակարգման և մոնիտորինգի համար համապատասխան պայմաններ ունեցող առողջապահական հաստատություններ դաշտային աշխատանքների իրականացման համար:
3. Տրամադրել սերմեր, սկրիներ և կտրոնների մենեջեր (պարտականությունները նշված են սույն ուղեցույցում) յուրաքանչյուր տեղամասի/հետազոտվող խմբի համար:
4. Տրամադրել առաջնային և երկրորդային խրախուսումներ հետազոտության մասնակիցներին: Այլ պարտականություններ նշված են սույն ուղեցույցում:
5. Տեղամասում արագ թեստավորման մեթոդով ՄԻԱՎ վարակի վերաբերյալ նախնական դրական արդյունքով մասնակիցներին ուղեկցել ՁԻԱՀ-ի ԿՀԿ՝ ՄԻԱՎ վարակի վերջնական ախտորոշման և անհրաժեշտության դեպքում բուժման տրամադրման համար:

**Գործընկերների ներգրավումը վերահսկման մեջ**

ԳՀ պետական ոլորտի հիմնական ստացողի և ՀԿ ոլորտի հիմնական ստացողի, ԳՀ տեղական գործակալի, ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի, ԱՀԿ-ի, ՄՀՀ-ի վերահսկող մարմնի ներկայացուցիչները պարբերաբար կմասնակցեն վերահսկմանը և մոնիտորինգային այցերին հետազոտության տեղամասեր:

## 7. Ընդգրկման նկարագրությունը

Բոլոր մասնակիցները, ներառյալ սերմերը, կստանան 3 կտրոն այլ մասնակիցներ ընդգրկելու համար: Ընդգրկման դինամիկայից կախված (եթե ընդգրկումն արագ է ընթանում)՝ ցանկալի ընտրանքային չափը չանցնելու համար տրամադրվող կտրոնների թիվը կնվազեցվի մինչև 2 կամ 1: Երբ նախատեսված ընտրանքի չափը լրացվի, կտրոնների տարածումը կդադարի: Ընդգրկվողը կներկայացնի ստացված կտրոնը հետազոտության տեղամաս: Հետազոտության անձնակազմի առաջին անդամը, որին կհանդիպի ընդգրկվողը, սկրիներն է, որին ընդգրկվողը կտա իր «ուղղորդման» կտրոնը: Նա կստուգի կտրոնի վավերականությունը և կգնահատի հետազոտության մեջ ընդգրկման չափանիշներին նրա համապատասխանությունը: Եթե ընդգրկվողը համապատասխանում է չափանիշներին, սկրիները կլրացնի համապատասխան ձևը, որին կկցվի կտրոնը: Այնուհետև նա մանրամասն կբացատրի հետազոտության շրջանակներում անցկացվող աշխատանքները (հարցազրույց, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության համար արյան նմուշառում և այլն): Եթե ընդգրկվողը համաձայնում է

մասնակցել հետազոտությանը, ստորագրում է տեղեկացված համաձայնություն, որից հետո սկրիները կուղեկցի ընդգրկվողին հարցազրուցավարի մոտ:

Բոլոր մասնակիցների հետ կանցկացվի դեմառդեմ հարցազրույց նախապես մշակված հարցաշարի միջոցով: Հարցազրույցից հետո խորհրդատուն բոլոր մասնակիցներին կտրամադրի նախաթեստային խորհրդատվություն, որին կհաջորդի արյան նմուշառում լաբորատոր հետազոտության համար: Բոլոր մասնակիցներին կառաջարկվի նաև անցնել ՄԻԱՎ-ի վերաբերյալ արագ թեստավորում: Հետթեստային խորհրդատվությունը կանցկացվի անմիջապես՝ ըստ արագ թեստավորման արդյունքների:

Արագ թեստավորման ավարտից հետո մասնակիցները կստանան առաջնային խրախուսում և կտրոններ խմբի նոր անդամներ ընդգրկելու համար: Երկրորդային խրախուսումները կտրամադրվեն խմբի յուրաքանչյուր նոր ընդգրկված անդամի համար:

Մասնակիցը կստանա մնացած լաբորատոր հետազոտությունների արդյունքները, երբ գա խմբի նոր ընդգրկված անդամի համար երկրորդային խրախուսում ստանալու:

*Սկրիներ*

- Ստուգում է յուրաքանչյուր կտրոնի վավերականությունը:
- Գնահատում է ընդգրկվելու չափանիշներին համապատասխանությունը, լրացնում է հետազոտությանը մասնակցելու չափանիշներին անհամապատասխանության ձևը (հավելված 5), եթե ընդգրկվողը չի համապատասխանում ընդգրկման չափանիշներին, լրացնում է հետազոտությունից հրաժարվելու ձևը (հավելված 6), եթե ընդգրկվողը համապատասխանում է ընդգրկման չափանիշներին, սակայն հրաժարվում է մասնակցությունից:
- Ստանում է տեղեկացված համաձայնություն ընդգրկվողից (հավելված 7):
- Տալիս է հսկման թերթիկ ընդգրկվողին (հավելված 8):
- Ուղեկցում է ընդգրկվողին հարցազրուցավարի մոտ:

*Հարցազրուցավար*

- Անցկացնում է հարցազրույց և լրացնում է հարցաշարը:
- Ապահովում է հարցազրույցի գաղտնիությունը:
- Կատարում է համապատասխան նշումներ հսկման թերթիկում:
- Ուղեկցում է ընդգրկվողին խորհրդատուի մոտ կամ արյան նմուշառման սենյակ, եթե ընդգրկվողը չի ցանկանում ստանալ խորհրդատվություն:

Բացի սկրիներից և հարցազրուցավարից, յուրաքանչյուր տեղամասում կլինեն նաև՝

*Տեղամասի ղեկավար*

- վերահսկում է հետազոտության/հարցումների որակը և համապատասխանությունը հետազոտության ուղեցույցին:

*Խորհրդատու*

- Տրամադրում է նախա- և հետթեստային խորհրդատվություն:
- Անհրաժեշտության դեպքում ուղեգրում է համապատասխան ծառայություններ:

*Կտրոնների մենեջեր*

- Տրամադրում է «ուղղորդման» կտրոն՝ բացատրելով դրա կիրառումը:
- Տրամադրում է առաջնային և երկրորդային խրախուսումներ:
- Տրամադրում է տեղեկատվական-կրթական նյութեր:
- Լրացնում է մասնակցի հսկման թերթիկը:
- Թարմացնում է կտրոնների հաշվառման և վարման ձևաթուղթը (հավելված 9):
- Լրացնում է կտրոնների մերժման հարցաշարը (հավելված 10):
- Լրացնում է ֆինանսական հաշվետվության ձևը (հավելված 11):

*Լաբորատոր մասնագետ*

- Ապահովում է հավաքագրված նմուշների համապատասխան պահպանումը:
- Լրացնում է հսկման թերթիկը և ուղեկցում մասնակցին կտրոնների մենեջերի մոտ:
- Իրականացնում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն արագ թեստավորման մեթոդով:

*Բուժքույր*

- Կատարում է արյան և կենսաբանական այլ նյութերի նմուշառում:
- Համարակալում է հավաքագրված նմուշները:
- Լրացնում է հսկման թերթիկը և ուղեկցում մասնակցին լաբորատոր մասնագետի մոտ:

## 8. Տվյալների հավաքագրում

Հետազոտության համար տվյալներ հավաքագրելու նպատակով կօգտագործվեն հարցազրուցավարների կողմից լրացվող հարցաշարերը:

Հարցաշարերը պարունակում են հարցեր բոլոր հիմնական ցուցանիշների մասին, ներառյալ սոցիալական և ժողովրդագրական բնութագրիչներ, սեռական վարքագիծ և պահպանակների օգտագործում, թմրամիջոցների ներարկային գործածում, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքներ, ՄԻԱՎ-ի վերաբերյալ

հետազոտություն, կանխարգելման ծրագրերում ընդգրկվածություն և այլն: Հարցաշարը լրացնելու համար անհրաժեշտ կլինի մոտ 30-40 րոպե: ՄՄՁԸ-ի ժամանակ օգտագործված յուրաքանչյուր հարցաշար կներառի հատուկ նույնականացման համար: Նույնականացման համարները նաև կօգտագործվեն՝ նշելու կենսաբանական նմուշները: Բոլոր հարցաշարերը (հավելվածներ 2, 3, 4) նախապես կփորձարկվեն թիրախային խմբերի հարցազրուցավարների կողմից:

## 9. Մոնիտորինգ և որակի ապահովում

ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն կանցկացնի ՀԿ-ների կողմից հետազոտության շրջանակներում իրականացվող դաշտային աշխատանքների մեթոդաբանական ղեկավարում և որակի հսկողություն:

Հետազոտության իրականացման գործընթացում կկատարվեն մոնիտորինգային այցեր՝ վերահսկելու, որ աշխատանքներն ընթանան ըստ սույն հետազոտության ուղեցույցի, ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների ազգային ուղեցույցի և գործնական աշխատանքի ձեռնարկի: Մոնիտորինգային խմբի անդամները որպես որակի վերահսկման մեթոդ կարող են օգտագործել դիտարկումը ընդգրկվողների սկրինինգի ժամանակ՝ համոզվելու, որ անձը պատկանում է թիրախային խմբին, հարցաշարերի և հսկման թերթիկների ստուգումը, ինչպես նաև օրվա վերջում հետազոտության այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը:

Ամեն շաբաթ հետազոտության տեղամասերը ՁԻԱՀ-ի ԿՀԿ կուղարկեն Excel համակարգչային ծրագրով կազմված աղյուսակ կտրոնների համարներով, ընդգրկման ամսաթվով և այլ հիմնական տվյալներով գնահատման համար: Տվյալները կօգտագործվեն կտրոնների սխալ համարներն ուղղելու, խոչընդոտները և համընկնումը (սերմերից կախվածություն) և այլ սխալներ հայտնաբերելու համար: Գտնված խնդիրները կներկայացվեն հետազոտության տեղամասի համակարգողին անմիջապես ուղղելու համար: Բացի այդ՝ հետազոտության տեղամասում ցանկացած խնդիր պետք է անհապաղ ներկայացվի ՁԻԱՀ-ի ԿՀԿ գնահատման, հետադարձ կապի և լուծման համար:

Բացի ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ից՝ մի անկախ կազմակերպություն/խորհրդատու կանցկացնի մոնիտորինգային այցեր՝ ապահովելու, որ բոլոր աշխատանքներն իրականացվեն ըստ ուղեցույցի և միջազգային ուղեցույցների:

## 10. Տվյալների մշակում և վերլուծություն

Տվյալները կրկնակի կմուտքագրվեն, կհամեմատվեն, անհամապատասխանությունների դեպքում կուղղվեն, կմաքրվեն և կկոդավորվեն: Տեղամասին հատուկ և ամբողջ խմբի, ունիվարիատ/բիվարիատ վերլուծություններ կկատարվեն՝ օգտագործելով հաջորդական ընտրանքային չափման գործակիցը RDS Analyst ծրագրում (www.hpmrg.org): Ծրագիրն օգտագործում է սոցիալական ցանցի չափի տվյալները, ընդգրկող-ընդգրկվող կապը և վստահության սահմանները՝ ներկայացնելու ընտրված խմբի ցանցը (Giles and Handcock, 2010): Տվյալները յուրաքանչյուր խմբի և յուրաքանչյուր քաղաքի համար կկշռվեն խմբի չափով (հիմնական խմբի չափով կամ բնակչության թվով, եթե հիմնական խմբի չափը հասանելի չէ): Դա կլինի երեք քաղաքներում հիմնական խմբերի համակցված վերլուծություն, որը չի ներկայացնի ամբողջ երկիրը, բայց կարող է հիմք դառնալ հետագայում ազգային մակարդակով էքստրապոլյացիայի համար:

Հետազոտության մեջ ներառված բոլոր խմբերի վերլուծությունը կանցկացվի ըստ հետևյալ բաժինների՝ խմբի հիմնական բնութագրիչներ, կենսաբանական ցուցանիշներ, ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիք, ռիսկային վարքագծի հիմնական բնութագրիչներ, կանխարգելման ծրագրերում ընդգրկվածություն:

## 11. Էթիկական հարցեր

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի էթիկայի կոմիտեն պետք է հավանություն տա անցկացվելիք ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների փաստաթղթերի փաթեթին:

Մասնակցությունը հետազոտությանը կամավոր է: Հետազոտությունն անանուն է: Գրավոր տեղեկացված համաձայնություն կստացվի բոլոր ընդգրկվողներից: Բոլոր մասնակիցները կտեղեկացվեն, որ անձը բացահայտող տվյալներ չեն ներառվելու հարցաշարում կամ արյան նմուշառման ժամանակ և հարցազրույցից ստացված տվյալները վերլուծվելու են ամբողջ թիրախային խմբի համատեքստում ու չեն կապվելու անձի հետ: Մասնակիցները նաև կտեղեկացվեն, որ ցանկացած պահի կարող են դադարեցնել հետազոտությանը իրենց մասնակցությունը:

Հետազոտության գաղտնիությունը կլինի լիովին ապահովված:

Մասնակիցները կտեղեկացվեն, թե երբ և որտեղ կարող են ստանալ իրենց հետազոտության արդյունքները: Նրանք, ովքեր կցանկանան ստանալ իրենց հետազոտության արդյունքները, կստանան հետթեստային խորհրդատվություն:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության դրական արդյունքով մասնակիցները հետթեստային խորհրդատվության ժամանակ կտեղեկացվեն հետագա հետազոտություններ անցնելու անհրաժեշտության մասին: Նրանք կուղեկցվեն ՁԻԱՀ-ի ԿՀԿ վերջնական ախտորոշման և անհրաժեշտության դեպքում համապատասխան բուժում ստանալու համար:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության բացասական արդյունքով մասնակիցներին տրամադրվող հետթեստային խորհրդատվության ժամանակ խորհրդատուն կիրավիրի նրանց ուշադրությունը ՄԻԱՎ վարակի կանխարգելման ուղիների և միջոցների վրա, կխրախուսի ավելի անվտանգ վարքագիծը:

Սիֆիլիսի նկատմամբ դրական արդյունքով մասնակիցները կուղղորդվեն համապատասխան ծառայություններ հետագա հետազոտություն անցնելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան բուժում ստանալու համար:

Վիրուսային հեպատիտի նկատմամբ դրական արդյունք ստացած մասնակիցները կուղղորդվեն համապատասխան մասնագետների մոտ՝ անհրաժեշտ մասնագիտական օգնություն ստանալու համար:

## 12. ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների խմբերի չափերի գնահատում

**Խմբերի սահմանումը**

**ԹՆՕ.** 18 տարեկան և ավելի տարիք ունեցող տղամարդ կամ կին, որը գործածել է թմրամիջոցներ ներարկային ճանապարհով վերջին 3 ամիսների ընթացքում:

**ԿՍԿ**. 18 տարեկան և ավելի տարիք ունեցող, վերջին 3 ամիսների ընթացքում կոմերցիոն սեռական ծառայություններ (հեշտոցային կամ անալ սեռական հարաբերություններ) տրամադրած կին:

**SUS.** 18 տարեկան և ավելի տարիք ունեցող տղամարդ, որն ունեցել է անալ սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ վերջին 12 ամիսների ընթացքում:

Կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքում կստացվեն տվյալներ, որոնք անհրաժեշտ են վերոնշյալ խմբերի չափերի գնահատման համար՝ օգտագործելով «ծառայության» և «հատուկ առարկայի» գործակիցների մեթոդները:

«Ծառայության» գործակիցը ներառում է առողջապահական ծառայություններ տրամադրող կազմակերպություններից ստացված ծրագրային տվյալների և հետազոտությանը նախորդած 6 ամիսների ընթացքում դրանցից հետազոտության մասնակիցների օգտվելու մասին հարցման տվյալների օգտագործումը: Կհավաքագրվեն տվյալներ ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների թվաքանակների վերաբերյալ, որոնք օգտվել են ծառայություններից հետազոտության անցկացումից

առաջ վեց ամսվա ընթացքում: «Հատուկ առարկայի» գործակցի դեպքում համապատասխան խմբերին աութրիչ աշխատողների կողմից մինչ հետազոտության սկսելը կբաժանվեն կաշվե թևնոցներ կամ այլ առարկաներ:

Գործակիցները կհաշվարկվեն ծառայություններից ստացված տվյալների և/կամ բաժանված առարկաների թվի համընկնումների և հետազոտության մասնակիցների մասնաբաժնի հիման վրա, որոնք կնշեն, որ ստացել են ծառայությունը և/կամ առարկան:

## Սոցիալական ցանցերի միջոցով խմբերի չափերի գնահատում

Սոցիալական ցանցերի միջոցով խմբերի չափերի գնահատման մեթոդն օգտագործում է ՄՄՁԸ-ի մեթոդով հետազոտության ժամանակ յուրաքանչյուր մասնակցի սոցիալական ցանցի վերաբերյալ հավաքագրված տվյալները՝ ենթադրելով, որ ցանցի հաջորդական ալիքներով բաշխումը արտացոլում է խմբի չափը: Գնահատումներ կատարելիս օգտագործվում է Բայեզիան մեթոդը (այսինքն՝ անհայտ քանակների հավանականությունը հաշվարկվում է՝ կապելով դրանց հայտնի քանակների հետ)՝ հիմնվելով խմբի չափի մասին ենթադրության կամ դրա վերաբերյալ նախորդ տվյալների վրա: Բայեզիան մեթոդը նաև թույլ է տալիս հաշվարկել խմբի չափի հավանական սահմանները:

## Բազմության իմաստությունը

Հետազոտության մասնակից ԹՆՕ-ներին, ԿՍԿ-ներին և SUS-ներին կտրվեն հարցեր իրենց խմբի մոտավոր չափերի մասին[1]: Այս մեթոդը հիմնված է ենթադրության վրա, որ հիմնական խմբերի բավականաչափ ներկայացուցիչների պատասխանները հնարավորություն կտան գնահատելու խմբի չափերը[2,3]: Հետազոտության մասնակիցների պատասխանների հիման վրա կհաշվարկվեն ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների խմբերի նվազագույն և առավելագույն չափերը, մեդիանան:

Գործակիցների մեթոդով խմբի չափը գնահատելու համար անհրաժեշտ է երկու մեծություն՝

- ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների թիվը, որոնք ստացել են առողջապահական ծառայություններ = n,

---

[1]Okal J, Geibel S, Muraguri N, Musyoki H, Tun W, Broz D, et al. Estimates of the size of key populations at risk for HIV infection: men who have sex with men, female sex workers and injecting drug users in Nairobi, Kenya. Sex Transm Infect 2013 Aug; 89(5):366–71. PMID: 23761166

[2]Lorenz J, Rauhut H, Schweitzer F, Helbing D. How social influence can undermine the wisdom of crowd effect. Proc Natl Acad Sci U S A 2011 May 31; 108(22):9020–5. doi: 10.1073/pnas.1008636108 PMID: 21576485 17.

[3] Lee MD, Zhang S, Shi J. The wisdom of the crowd playing The Price Is Right. Mem Cognit 2011 Jul; 39 (5):914–23. doi: 10.3758/s13421-010-0059-7 PMID: 21264578

- ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների մասնաբաժինը, որոնք հետազոտության ժամանակ նշել են այդպիսի ծառայություններ ստանալու մասին = p:

Խմբի չափը կարող է գնահատվել՝ օգտագործելով հետևյալ հավասարումը.

$$PSE_{(multiplier)} = e = \frac{n}{p}$$

Հատուկ առարկաների հաշվարկը կատարվում է վերևում նկարագրվածի պես, բայց տվյալների աղբյուրները տարբեր են:

Յուրաքանչյուր խմբի հարցաշարերում կան որոշակի հարցեր, որոնց պատասխանները կօգտագործվեն խմբի չափի գնահատման համար:

*ԿՍԿ-ների համար*

- Ստացե՞լ եք պահպանակներ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելման միավորում» ՀԿ-ի կողմից Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում):
- Հետազոտվե՞լ եք ՄԻԱՎ-ի վերաբերյալ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելման միավորում» ՀԿ-ի ուղղորդմամբ Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում):
- Հետազոտվե՞լ եք սեռավարակների վերաբերյալ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելման միավորում» ՀԿ-ի ուղղորդմամբ Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում):
- Ենթարկվե՞լ եք վարչական տույժի նախորդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

*ԹՆՕ-ների համար*

- Դիմե՞լ եք բժշկի թմրամիջոցներից կախվածությունից բուժվելու համար (բացի մեթադոնային փոխարինող բուժումից) նախորդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
- Ինչպիսի՞ն էր այդ բուժումը՝ անանու՞ն, թե՞ գրանցված:
- Ստացե՞լ եք մեթադոնային փոխարինող բուժում նախորդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
- Ստացե՞լ եք ներարկիչներ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ի կողմից Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում):
- Ստացե՞լ եք պահպանակներ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ի կողմից Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում):

- Հետազոտվե՞լ եք ՄԻԱՎ-ի վերաբերյալ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ի ուղղորդմամբ Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում):
- Ենթարկվե՞լ եք վարչական տույժի նախորդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

*<u>SUS-ների համար</u>*

- Ստացե՞լ եք պահպանակներ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «Նոր սերունդ» ՀԿ-ի կողմից Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում):
- Հետազոտվե՞լ եք ՄԻԱՎ-ի վերաբերյալ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «Նոր սերունդ» ՀԿ-ի ուղղորդմամբ Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում):

**Խմբերի չափերի գնահատումը՝ ըստ քաղաքների և ազգային մակարդակով**

Վերոնշյալ մեթոդներով խմբերի չափերի գնահատումներն ստանալուց հետո դրանք կներկայացվեն վավերականացման աշխատանքային հանդիպման ժամանակ, որին կմասնակցեն պետական ոլորտի, ՀԿ-ների, հիմնական խմբերի ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ կողմեր: Հանդիպումը կկազմակերպվի՝

- հետազոտության յուրաքանչյուր տեղամասում յուրաքանչյուր խմբի չափի վերջնական գնահատման շուրջ համաձայնության գալու,
- ստացված տվյալները մարզային և ազգային մակարդակներով էքստրապոլյացիայի ենթարկելու նպատակով:

Վերոնշյալ առաջին քայլի համար մասնակիցները կբաժանվեն երեք խմբի՝ յուրաքանչյուրը ներկայացնելով քաղաքներից մեկը: Յուրաքանչյուր խումբ կգնահատի գործակիցների մեթոդով ստացված արդյունքները՝ հաշվի առնելով տվյալ մեթոդին բնորոշ շեղումները (սխալը): Տվյալները կմուտքագրվեն աղյուսակի մեջ՝ հաշվարկների գերա- և թերագնահատումների հիման վրա ուղղելու նպատակով: Այնուհետև խմբերը կգան համաձայնության յուրաքանչյուր քաղաքում յուրաքանչյուր խմբի համար առավել նպատակահարմար մեթոդի շուրջ՝ հիմնվելով իրենց գիտելիքների և փորձի վրա: Երեք խմբերի կողմից համաձայնեցված տարբերակը կներկայացվի հանդիպման մասնակիցներին վերջնական համաձայնության գալու նպատակով:

**ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների խմբերի խտության աստիճանների ձևավորում**

ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների և SUS-ների ազգային մակարդակով խմբերի չափերի գնահատման համար հաջորդ քայլը կլինի բոլոր քաղաքներում/մարզերում խմբերի խտության աստիճանների ձևավորումը: Կձևավորվեն երեք խմբեր, որոնք կներկայացնեն հիմնական խմբերից յուրաքանչյուրի խտության աստիճանների (բարձր, միջին և ցածր) ձևավորման չափանիշները: Չափանիշները կարող են ներառել՝ արդյունաբերության և/կամ առևտրի զարգացումը, բնակչության շարժունությունը, հանգստի և/կամ տուրիզմի զարգացումը, ուսումնական հաստատությունների և/կամ ռազմաբազաների առկայությունը, սահմանամերձ գոտում գտնվելը: Երևանը, Գյումրին և Վանաձորը կարող են դիտարկվել որպես խտության բարձր աստիճանով քաղաքներ:

Այս գործընթացի ժամանակ յուրաքանչյուր խումբ քարտեզի վրա համապատասխան գույնով կնշի հիմնական խմբերի խտության աստիճանները (բարձր խտություն՝ կարմիր, միջին խտություն՝ կապույտ, ցածր խտություն կամ գոյություն չունի՝ սպիտակ) և այդ վայրերում մեծահասակ բնակչության մասնաբաժինը: Օրինակ՝ քաղաքներ բարձր խտությամբ (2,5%), միջին խտությամբ (0,8%) և ցածր (0,1%) խտությամբ:

Քարտեզները կներկվեն աշխատանքային խմբերի կողմից առաջնային գիտելիքների և փորձի, ինչպես նաև երկրորդային աղբյուրների հիման վրա: Լրացված քարտեզները կներկայացվեն բոլոր մասնակիցներին վերջնական փոփոխությունների և համաձայնության համար:

Աշխատանքային հանդիպումից հետո վերջնական համաձայնության տեղեկատվությունը կհամակցվի երկրորդային գրականության ուսումնասիրության հետ՝ ստանալու վերջնական տվյալներ հիմնական խմբերի բարձր, միջին և ցածր տարածվածությունը ներկայացնելու համար: Այդ տվյալները կհաշվարկվեն Հայաստանում անցկացված վերջին մարդահամարի արդյունքների հիման վրա՝ յուրաքանչյուր քաղաքի բնակչության թիվը բաժանելով տվյալ քաղաքի համար գնահատված յուրաքանչյուր խմբի թվի վրա: Այնուհետև ստացված մասնաբաժինները կբազմապատկվեն համապատասխան խմբի չափով Հայաստանի բոլոր քաղաքներում: Այդ թվերը կգումարվեն, և կստացվի Հայաստանում յուրաքանչյուր խմբի վերջնական չափը:

## 13. Ժամանակացույց

| | I ամիս | II ամիս | III ամիս | IV ամիս | V ամիս | VI ամիս |
|---|---|---|---|---|---|---|
| Նախապատրաստական աշխատանք (անձնակազմի համար վարժանք և այլն) | X | X | | | | |
| Դաշտային աշխատանքներ | | | X | X | X | |
| Տվյալների մուտքագրում և վերլուծություն | | | X | X | X | |
| Զեկույցի կազմում | | | | | | X |

## 14. Հետազոտության արդյունքների տարածում

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները կներկայացվեն զեկույցի ձևով, որը կտրամադրվի պետական, հասարակական և միջազգային շահագրգիռ կազմակերպություններին:

*Հավելված 1*

**Ուղղորդման կտրոն**

հետազոտությանը մասնակցելու համար

Հասցե_______________________________________________

Հեռ.________________________________________________

(կարող եք զանգահարել հանդիպման համար նախապես պայմանավորվելու համար)

Նույնականացման համար | | | | | | | | |

Աշխատանքային ժամեր. երկուշաբթի-ուրբաթ, 9:00-17:00

Վավերականության ժամկետ _______

**Ձեր առողջությունը պահպանելու համար**

Եկե՛ք մասնակցելու հետազոտությանը այս կտրոնով և եթե համապատասխանում եք հետազոտության մեջ ընդգրկվելու չափանիշներին, դուք կստանաք _____ դրամ փոխհատուցում՝ հարցազրույցի և ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն անցնելու համար:

**Կտրոնը չի ընդունվի հետևյալ դեպքերում՝**

- ծրագիրն ունի բավարար չափով մասնակիցներ,
- կտրոնը պատռված է, կեղծված կամ անընթեռնելի,
- կտրոն ներկայացնողն արդեն իսկ մասնակցել է հետազոտությանը նմանատիպ կտրոնով:

**Վճարման կտրոն**

խրախուսում ստանալու համար

Հասցե_______________________________________________

Հեռ.________________________________________________

Դուք կստանաք խրախուսում յուրաքանչյուր անձի համար, որին կուղղորդեք և կներգրավեք հետազոտության մեջ:

**Կտրոնը չի ընդունվի հետևյալ դեպքերում.**

- ծրագիրն ունի բավարար չափով մասնակիցներ
- կտրոնը պատռված է, կեղծված կամ անընթեռնելի

**Դուք կստանաք փոխհատուցում, եթե յուրաքանչյուր անձ, որին ընդգրկել եք՝**

- համապատասխանում է հետազոտությանը ընդգրկվելու չափանիշներին,
- չի մասնակցել հետազոտությանը նմանատիպ կտրոնով,

Նույնականացման համար | | | | | | | | |

Խնդրում ենք նախապես զանգահարել և ներկայանալ այս կտրոնով խրախուսում ստանալու համար:

Խրախուսման տրամադրման օրն ու ժամը _______

- մասնակցել է հետազոտության բոլոր փուլերին:

*<u>Հավելված 2</u>*

## ՀԱՐՑԱԹԵՐԹ

### ԹՆՕ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների անցկացման

| **Կտրոնի համարը** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

### Մաս 1. Անհատական սոցիալական ցանցի վերաբերյալ հարցեր

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 101 | Ձեր բնակավայրում ապրող 18 տարեկանից բարձր տարիքի որքա՞ն թմրամիջոցների ներարկային օգտագործող եք ճանաչում, որոնք ճանաչում են Ձեզ, և որոնք օգտագործել են թմրամիջոց ներարկային ճանապարհով վերջին երեք ամիսների ընթացքում:<br><br>Նշե՛ք «0», եթե որևէ մեկին չեք ճանաչում, և անցե՛ք 201 հարցին | ____ |
| 102 | Նրանցից քանիսի՞ն եք տեսել վերջին 1 ամսվա ընթացքում | ____ |

### Մաս 2. Մասնակից – հավաքագրող հարաբերություններ

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 201 | Ինչպե՞ս կբնորոշեիք Ձեր հարաբերությունները Ձեզ հավաքագրող անձի հետ (հնարավոր է մի քանի պատասխան): | □ հետազոտություն իրականացնող 1<br>□ ընկեր 2<br>□ գործընկեր 3<br>□ միասին եք բնակվում 4<br>□ հարևան 5<br>□ մոտ ազգական 6<br>□ բարեկամ 7<br>□ ծանոթ 8<br>□ անծանոթ 9<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 202 | Ինչ՞ու եք վերցրել կտրոնը և համաձայնել մասնակցելու այս հետազոտությանը (հնարավոր է մի քանի պատասխան): | □ դրամական խրախուսում ստանալու համար 1<br>□ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու համար 2<br>□ այլ հետազոտությունների համար 3<br>□ ընկերոջ խնդրանքով 4<br>□ հետազոտությունը հետաքրքրեց 5<br>□ պարզապես կար ազատ ժամանակ 6<br>□ այլ 7 |

**Մաս 3. Ժողովրդագրական բնութագրիչներ**

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 301 | Տարիքը | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 302 | Սեռը | □ արական 1<br>□ իգական 2<br>□ չի պատասխանել 99 |
| 303 | Ծննդավայրը | □ Հայաստանի Հանրապետություն 1<br>□ Ռուսաստանի Դաշնություն 2<br>□ Վրաստան 3<br>□ այլ 4<br>□ չի պատասխանել 99 |
| 304 | Կրթությունը | □ դպրոցում չի սովորել 1<br>□ թերի հիմնական 2<br>□ հիմնական 3<br>□ թերի ավագ դպրոց 4<br>□ ավագ դպրոց 5<br>□ միջին մասնագիտական 6<br>□ թերի բարձրագույն 7<br>□ բարձրագույն 8<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 305 | Ընտանեկան կարգավիճակը | □ ամուրի 1<br>□ ամուսնացած 2<br>□ ամուսնալուծված 3<br>□ քաղաքացիական ամուսնություն 4<br>□ այրի 5<br>□ չի պատասխանել 99 |
| 306 | Ներկայումս ապրո՞ւմ եք սեռական զուգընկերոջ հետ | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 307 | Վերջին 1 տարվա ընթացքում բացակայե՞լ եք տնից ավելի քան մեկ ամիս<br><br>**Եթե ոչ, անցե՛ք 312 հարցին** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 308 | Վերջին 1 տարվա ընթացքում, երբ բացակայել եք տնից ավելի քան մեկ ամիս, որտե՞ղ եք եղել | □ Հայաստան-այլ մարզ 1<br>□ Ռուսաստան 2<br>□ Ուկրաինա 3<br>□ այլ 4<br>□ չի պատասխանել 99 |
| 309 | Վերջին 1 տարվա ընթացքում, երբ բացակայել եք տնից ավելի քան մեկ ամիս, ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ առանց պահպանակի | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 310 | Վերջին 1 տարվա ընթացքում, երբ բացակայել եք տնից ավելի քան մեկ ամիս, օգտագործե՞լ եք թմրամիջոցներ ներարկային ճանապարհով ուրիշի ներարկիչով | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 311 | Ո՞րն է Ձեր եկամտի հիմնական աղբյուրը | □ եկամուտ չունի 1<br>□ լրիվ դրույքով աշխատանք 2<br>□ կես դրույքով աշխատանք 3<br>□ կենսաթոշակ 4<br>□ արտաքին օգնություն 5<br>□ այլ 6<br>□ չի պատասխանել 99 |
| 312 | Աշխատելու նպատակով եղե՞լ եք արտերկրում 3 կամ ավելի ամիս,բայց ոչ ավելի, քան 12 ամիս վերջին տարվա ընթացքում | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |

## Մաս 4. Սեռական կյանքին և պահպանակի օգտագործմանն առնչվող հարցեր

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| *Ցանկանում ենք Ձեզ մի քանի հարց ուղղել[a]՝ կապված Ձեր սեռական վարքագծի հետ: Մենք հասկանում ենք[a]՝ ինչքան անձնական են այդ հարցերը, բայց միաժամանակ ցանկանում ենք մեկ անգամ ևս նշել, որ Ձեր անձի գաղտնիությունը լիովին պահպանված է, և որ նույն հարցերն ուղղվում են բոլոր հարցվողներին: Սեռական հարաբերությունները ներառում են հեշտոցային և անալ հարաբերությունները:* | | |
| 401 | Երբևիցե ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ<br><br>**Եթե ոչ, անցե՛ք 501 հարցին** | □ այո<br>□ ոչ<br>□ չի պատասխանել 99 |
| 402 | Ո՞ր տարիքում եք առաջին անգամ սեռական հարա-բերություն ունեցել | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 403 | Քանի՞ զուգընկեր եք ունեցել վերջին մեկ տարվա ընթացքում | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 404 | Ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ վերջին 30 օրվա ընթացքում | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 405 | Դուք (կամ Ձեր զուգընկերը) օգտագործե՞լ եք պահպանակ սեռական վերջին հարաբերության ժամանակ | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 406 | Քանի՞ մշտական զուգընկեր եք ունեցել վերջին մեկ տարվա ընթացքում<br>*Մշտական զուգընկեր. զուգընկեր, որը Ձեր ամուսինը կամ կինն է (անկախ նրանից՝ քաղաքացիական, թե գրանցված ամուսնության մեջ եք) կամ ընկերը/ընկերուհին, որի հետ Դուք ունեցել եք մշտական սեռական հարաբերություններ ամենաքիչը 3 ամիս* | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 407 | Վերջին մեկ տարվա ընթացքում մեկ մշտական զուգկներոջ հետ միջինը քանի՞ սեռական հարաբերություն եք ունեցել | ____<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 408 | Վերջին մեկ տարվա ընթացքում քանի՞ անգամ եք պահպանակ օգտագործել մշտական զուգնկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 409 | Վերջին մեկ տարվա ընթացքում ի՞նչ հաճախականությամբ եք օգտագործել պահպանակ մշտական զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալիս<br><br>**Եթե միշտ, անցե՛ք 411 հարցին** | □ միշտ 1<br>□ երբեմն 2<br>□ երբեք 3<br>□ չի պատասխանել 99 |
| 410 | Ինչո՞ւ չեք օգտագործում պահպանակ ամեն անգամ մշտական զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալիս (հնարավոր է մի քանի պատասխան) | □ շատ թանկ է 1<br>□ ամաչում եմ գնել 2<br>□ դժվար է օգտագործել 3<br>□ այնքան էլ հասանելի չէ 4<br>□ նվազեցնում է հաճույքը 5<br>□ ամաչում եմ զուգընկերոջս խնդրել օգտագործել այն 6<br>□ վստահում եմ զուգընկերոջս 7<br>□ չգիտեմ պահպանակի օգտագործման արդյունավետության մասին 8<br>□ օգտագործում եմ հղիության կանխարգելման համար 9<br>□ այլ ____________ 10<br>□ չի պատասխանել 99 |
| 411 | Քանի՞ պատահական զուգընկեր եք ունեցել վերջին մեկ տարվա ընթացքում<br>*Պատահական զուգընկեր. զուգընկեր, որը Ձեր ամուսինը կամ կինը չէ (անկախ նրանից՝ քաղաքացիական ամուսնություն է, թե գրանցված ամուսնություն) կամ ընկերը/ ընկերուհին չէ* | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 412 | Պատահական  զուգընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ Դուք (կամ Ձեր զուգընկերը) օգտագործե՞լ եք պահպանակ | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 413 | Վերջին մեկ տարվա ընթացքում մեկ պատահական զուգնկերոջ հետ միջինը քանի՞ սեռական հարաբերություն եք ունեցել | ____<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 414 | Վերջին մեկ տարվա ընթացքում պատահական զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների ժամանակ քանի՞ անգամ եք պահպանակ օգտագործել | ____<br><br>□ չի պատասխանել 99 |
| 415 | Վերջին 1 տարվա ընթացքում պատահական զուգընկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ որքա՞ն հաճախ եք պահպանակ օգտագործել<br><br>**Եթե «ամեն անգամ», անցե՛ք 415 հարցին:** | □ ամեն անգամ 1<br>□ ոչ միշտ 2<br>□ երբեք 3<br>□ չի պատասխանել 99 |
| 416 | Ինչո՞ւ մշտապես պահպանակ չեք օգտագործում պատահական զուգընկերոջ հետ սեռական հարաբերության ժամանակ (հնարավոր է մի քանի պատասխան) | □ շատ թանկ է 1<br>□ամաչում եմ գնել 2<br>□ դժվար է օգտագործել 3<br>□ այդքան էլ հեշտ չէ ձեռք բերել 4<br>□ նվազեցնում է հաճույքը 5<br>□ ամաչում եմ զուգընկերոջը խնդրել օգտագործել 6<br>□ վստահում եմ զուգընկերոջս 7<br>□ չգիտեմ պահպանակի օգտագործման արդյունավետության մասին 8<br>□ օգտագործում եմ միայն հղիության կանխման նպատակով 9<br>□ այլ ___________ 10<br>□ չի պատասխանել 99 |
| 417 | Երբևէ օգտվե՞լ եք կոմերցիոն սեռական ծառայություններից<br><br>***Եթե ոչ, անցե՛ք 419 հարցին:*** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 418 | Վերջին անգամ կոմերցիոն սեռական ծառայություններից օգտվելիս օգտագործե՞լ եք պահպանակ | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 419 | Երբևէ ստացե՞լ եք գումար կամ նվերներ սեռական հարաբերության դիմաց (միայն կին ԹՆՕ-ների համար)<br><br>***Եթե ոչ, անցե՛ք 501 հարցին:*** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 420 | Վերջին անգամ, երբ ստացել եք գումար կամ նվերներ սեռական հարաբերության դիմաց, օգտագործե՞լ եք պահպանակ | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |

## Մաս 5. Ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործմանն առնչվող հարցեր

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| *Ցանկանում ենք Ձեզ մի քանի հարց ուղղել՝ կապված թմրամիջոցների օգտագործման հետ: Հավաստիացնում ենք, որ գաղտնիությունն ապահովված է: Հիշե՛ք, որ բոլոր հարցվողներին տրվում են նույն հարցերը:* | | |
| 501 | Որքա՞ն հաճախ եք օգտագործում ալկոհոլ պարունակող խմիչք | □ երբեք 1<br>□ ամիսը մեկ անգամ կամ քիչ 2<br>□ ամիսը 2-4 անգամ 3<br>□ շաբաթը 2-3 անգամ 4<br>□ շաբաթը 4 կամ ավելի անգամ 5<br>□ չի պատասխանել 99 |
| 502 | Քանի՞ բաժին ալկոհոլ պարունակող խմիչք եք օգտագործում սովորաբար | □ 1 կամ 2 1<br>□ 3 կամ 4 2<br>□ 5 կամ 6 3<br>□ 7-9 4<br>□ 10 կամ ավելի 5 |
| 503 | Որքա՞ն հաճախ եք օգտագործում 6 կամ ավելի բաժին ալկոհոլ | □ երբեք 1<br>□ ամիսը մեկ անգամից քիչ 2<br>□ ամիսը մեկ անգամ 3<br>□ շաբաթը մեկ անգամ 4<br>□ ամեն օր կամ համարյա ամեն օր 5<br>□ չի պատասխանել 99 |
| 504 | Ո՞ր տարիքում եք առաջին անգամ թմրամիջոց օգտագործել | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 505 | Ինչ՞ թմրամիջոց եք օգտագործել առաջին անգամ | □ կանեփ/մարիխուանա (պլան, անաշա, հաշիշ) 1<br>□ տրանկվիլիզատորներ կամ սեդատիվ միջոցներ (դիազեպամ, վալիում, |

| | | |
|---|---|---|
| | | սեդուքսեն, տրանկվին, լորազեպամ, տազեպամ, օքսազեպամ) 2<br>□ էքստազի 3<br>□ ցնդող նյութեր (սոսինձ, ացետոն) 4<br>□ ամֆետամիններ 5<br>□ կոաքսիլ 6<br>□ հերոին 7<br>□ մեթադոն 8<br>□ կոկաին 9<br>□ չերնյաշկա 10<br>□ դեզոմորֆին (բենզին) 11<br>□ ցավազրկողներ 12<br>□ այլ ____________ 13<br>□ չի պատասխանել 99 |
| 506 | Ինչ՞ թմրամիջոց եք օգտագործել վերջին տարվա ընթացքում (հնարավոր է մի քանի պատասխան) | □ կանեփ/մարիխուանա (պլան, անաշա, հաշիշ) 1<br>□ տրանկվիլիզատորներ կամ սեդատիվ միջոցներ (դիազեպամ, վալիում, եդուքսեն, տրանկվին, լորազեպամ, տազեպամ, օքսազեպամ) 2<br>□ էքստազի 3<br>□ ցնդող նյութեր (սոսինձ, ացետոն) 4<br>□ ամֆետամիններ 5<br>□ կոաքսիլ 6<br>□ հերոին 7<br>□ մեթադոն 8<br>□ կոկաին 9<br>□ չերնյաշկա 10<br>□ դեզոմորֆին (բենզին) 11<br>□ ցավազրկողներ 12<br>□ այլ ____________ 13<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 507 | Որտե՞ղ եք առաջին անգամ օգտագործել թմրամիջոց | □ Հայաստան 1<br>□ Ռուսաստան 2<br>□ Ուկրաինա 3<br>□ այլ ___________ 4<br>□ չի պատասխանել 99 |
| 508 | Ո՞ր տարիքում եք առաջին անգամ թմրամիջոց օգտագործել ներարկային ճանապարհով | ____<br><br>□ չի պատասխանել 99 |
| 509 | Ինչ՞ թմրամիջոց եք օգտագործել ներարկային ճանապարհով առաջին անգամ օգտագործելիս | □ հերոին 1<br>□ չերնյաշկա 2<br>□ դեզոմորֆին (բենզին) 3<br>□ այլ ___________ 4<br>□ չի պատասխանել 99 |
| 510 | Որտե՞ղ եք առաջին անգամ օգտագործել թմրամիջոց ներարկային ճանապարհով | □ Հայաստան 1<br>□ Ռուսաստան 2<br>□ Ուկրաինա 3<br>□ այլ ___________ 4<br>□ չի պատասխանել 99 |
| 511 | Վերջին 3 ամսվա ընթացքում օգտագործե՞լ եք նշված նյութերից որևէ մեկը ներարկային ճանապարհով (հնարավոր է մի քանի պատասխան) | □ հերոին 1<br>□ չերնյաշկա 2<br>□ դոզոմորֆին (բենզին) 3<br>□ այլ ___________ 4<br>□ չի պատասխանել 99 |
| 512 | Օգտագործե՞լ եք արդյոք ներարկային թմրամիջոցներ վերջին մեկ ամսվա ընթացքում<br><br>**Եթե ոչ, անցե՛ք 515 հարցին:** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 513 | Վերջին մեկ ամսվա ընթացքում քանի՞ անգամ եք ներարկային ճանապարհով թմրամիջոց օգտագործել | ____<br><br>□ չի պատասխանել 99 |

*Հաջորդ մի քանի հարցերը վերաբերում են թմրամիջոցների ներարկային օգտագործման պարագաներին և դրանց օգտագործմանը: «**Թմրամիջոցների ներարկային օգտագործման պարագաներն**» են ասեղները և ներարկիչները, թմրամիջոցի պատրաստման ժամանակ օգտագործվող տարողությունները, գդալները, ֆիլտրերը: «**Համատեղ օգտագործում**» ասելով՝ նկատի ունենք ներարկային օգտագործման այնպիսի պարագաների ( ասեղներ կամ ներարկիչներ ) օգտագործում, որոնք արդեն իսկ*

| | | |
|---|---|---|
| *օգտագործվել են մեկ ուրիշի (այդ թվում Ձեր զուգընկերոջ) կողմից, ինչի մասին Դուք գիտեք կամ կասկածում եք:* | | |
| 514 | Վերջին մեկ ամսվա ընթացքում օգտագործե՞լ եք արդյոք ընդհանուր ներարկման պարագաներ | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 515 | Երբևէ  օգտագործե՞լ եք ուրիշի կողմից պատրաստված թմրամիջոց | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 516 | Միջինը մեկ ամսվա ընթացքում համատեղ քանի՞ հոգու հետ եք ներարկային ճանապարհով թմրամիջոցներ օգտագործել | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 517 | Միջինը մեկ ամսվա ընթացքում թմրամիջոցների ներարկային համատեղ օգտագործման քանի՞ դեպք եք ունեցել | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 518 | Թմրամիջոցի յուրաքանչյուր ներարկման ժամանակ օգտագործո՞ւմ եք նոր, միանվագ ներարկիչ<br><br>**Եթե «ամեն անգամ», անցե՛ք 519 հարցին** | □ ամեն անգամ 1<br>□ երբեմն 2<br>□ երբեք 3<br>□ չի պատասխանել 99 |
| 519 | Վերջին մեկ ամսվա ընթացքում թմրամիջոց ներարկելիս  օգտագործե՞լ եք արդյոք ոչ ստերիլ պարագաներ | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 520 | Թմրամիջոցների վերջին ներարկային օգտագործման ժամանակ օգտագործե՞լ եք ստերիլ ասեղ և ներարկիչ | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 521 | Ախտահանո՞ւմ եք ասեղները և ներարկիչները մինչ թմրամիջոց ներարկելը<br><br>**Եթե երբեք, անցե՛ք 523 հարցին** | □ այո, միշտ ախտահանում եմ 1<br>□ երբեմն եմ ախտահանում 2<br>□ երբեք չեմ ախտահանում 3<br>□ չի պատասխանել 99 |
| 522 | Ինչպե՞ս եք ախտահանում ասեղները և ներարկիչները | □ լվանում եմ ջրով 1<br>□ եռացնում եմ 2<br>□ ախտահանում եմ սպիրտով կամ յոդով 3<br>□ այլ ____________ 4<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 523 | Վերջին 1 ամսվա ընթացքում ունեցե՞լ եք մաշկի հետ կապված խնդիրներ (մաշկի կարմրություն, ցավ, վարակ) թմրամիջոցի ներարկման տեղում | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 524 | Ցանկացե՞լ եք երբևիցե բուժվել թմրամիջոցի ներարկային օգտագործումից<br><br>**Եթե ոչ, անցե՛ք 527 հարցին** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 525 | Վերջին 1 տարվա ընթացքում դիմե՞լ եք բժշկի թմրամիջոցների ներարկային օգտագործումից բուժվելու համար (բացի մեթադոնային փոխարինող բուժումից)<br><br>**Եթե ոչ, անցե՛ք 526 հարցին** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 526 | Ի՞նչ պատճառով եք դիմել բժշկի (հնարավոր է մի քանի պատասխան) | □ դադարեցնելու օգտագործումը 1<br>□ գերդոզավորման պատճառով 2<br>□ մաշկային վարակների պատճառով 3<br>□ այլ վարակների պատճառով 4<br>□ այլ 5<br>□ չի պատասխանել 99 |
| 527 | Ինչպիսի՞ն է եղել բուժումը | □ գրանցված 1<br>□ անանուն 2<br>□ չի պատասխանել 99 |
| 528 | Վերջին 1 տարվա ընթացքում դիմե՞լ եք բժշկի մեթադոնային փոխարինող բուժում ստանալու համար<br><br>**Եթե ոչ, անցե՛ք 531 հարցին** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 529 | Վերջին 1 տարվա ընթացքում ստացե՞լ եք մեթադոնային փոխարինող բուժում | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 530 | Բացատրե՛ք[a]՝ ինչու չեք դիմել բժշկի մեթադոնային փոխարինող բուժում ստանալու համար | □ չեմ վստահում բժիշկներին 1<br>□ չեմ հավատում բուժման հաջողությանը 2<br>□ չեմ հավատում, որ |

| | | |
|---|---|---|
| | | կպահպանվի գաղտնիությունը 3<br>□ ֆինանսական խնդիրներ ունեմ 4<br>□ ինձ հիվանդ չեմ համարում 5<br>□ չի պատասխանել 99 |
| 531 | Երբևիցե ունեցե՞լ եք ոստիկանության հետ խնդիրներ թմրամիջոցների օգտագործման պատճառով<br><br>**Եթե ոչ, անցե՛ք 534 հարցին** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 532 | Ինչպիսի՞ խնդիրներ եք ունեցել | □ վարչական տույժ 1<br>□ ձերբակալվել եմ 2<br>□ այլ ____________ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 533 | Երբևէ ունեցե՞լ եք թմրամիջոցներից գերդոզավորում այն աստիճանի, որ կորցրել եք գիտակցությունը | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չեմ հիշում 3<br>□ չի պատասխանել 99 |

## Մաս 6. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հարցեր

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 601 | Լսե՞լ եք արդյոք ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 602 | Որտեղի՞ց եք լսել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին | □ ընտանիքում 1<br>□ ընկերներից/ծանոթներից 2<br>□ ԶԼՄ-ներից 3<br>□ դպրոցում 4<br>□ սոցիալական աշխատողներից 5<br>□ բուժաշխատողներից 6<br>□ խորհրդատվական ծառայություններից 7<br>□ այլ ____________ 8<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 603 | Ինչպե՞ս եք գնահատում Ձեր՝ ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը | ☐ շատ հավանական է 1<br>☐ քիչ հավանական է 2<br>☐ բացառվում է 3<br>☐ չի պատասխանել 99 |
| 604 | Գիտե՞ք արդյոք, թե ցանկության դեպքում որտեղ կարող եք հետազոտվել ՄԻԱՎ-ի վերաբերյալ | ☐ այո 1<br>☐ ոչ 2<br>☐ չի պատասխանել 99 |
| 605 | Վերջին 12 ամիսների ընթացքում Ձեզ տրամադրվե՞լ են պահպանակներ (օրինակ՝ աութրիչ ծառայություններում կամ հասարակական կազմակերպությունում) | ☐ այո 1<br>☐ ոչ 2<br>☐ չի պատասխանել 99 |
| 606 | Վերջին 12 ամիսների ընթացքում Ձեզ տրամադրվե՞լ են մանրէազերծ ներարկիչներ և ասեղներ (օրինակ՝ աութրիչ աշխատողների, «հավասարը հավասարին» մեթոդով ուսուցանողների կողմից կամ ներարկիչների փոխանակման ծրագրերի միջոցով) | ☐ այո 1<br>☐ ոչ 2<br>☐ չի պատասխանել 99 |
| 607 | Արդյոք հասանելի/մատչելի՞ են Ձեզ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն տրամադրող ծառայությունները | ☐ այո 1<br>☐ ոչ 2<br>☐ չգիտեմ 3<br>☐ չի պատասխանել 99 |
| 608 | Վերջին 12 ամիսների ընթացքում հետազոտվե՞լ եք արդյոք ՄԻԱՎ-ի վերաբերյալ<br><br>Եթե **ոչ** կամ **«չեմ ցանկանում պատասխանել»**, անցե՛ք 701 հարցին | ☐ այո 1<br>☐ ոչ 2<br>☐ չի պատասխանել 99 |
| 609 | Եթե հետազոտվել եք ՄԻԱՎ-ի վերաբերյալ, ապա ինչպե՞ս է դա իրականացվել | ☐ կամավոր 1<br>☐ պարտադիր 2<br>☐ այլ ____________ 3<br>☐ չի պատասխանել 99 |
| 610 | Իմացե՞լ եք արդյոք հետազոտության արդյունքների մասին | ☐ այո 1<br>☐ ոչ 2<br>☐ չի պատասխանել 99 |
| 611 | Ինչպիսի՞ն է եղել հետազոտության արդյունքը | ☐ դրական 1<br>☐ բացասական 2<br>☐ չգիտեմ 3<br>☐ չի պատասխանել 99 |

## Մաս 7. ՄԻԱՎ վարակի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը գնահատելու համար հարցեր

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 701 | Հնարավո՞ր է նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման վտանգը՝ միայն մեկ, հավատարիմ, ՄԻԱՎ-ով չվարակված զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալով | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 702 | Հնարավո՞ր է ՄԻԱՎ-ով վարակման վտանգը նվազեցնել՝ պահպանակ օգտագործելով | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 703 | Կարո՞ղ է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը լինել ՄԻԱՎ-ով վարակված | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 704 | Հնարավո՞ր է վարակվել ՄԻԱՎ-ով մոծակի կծելու միջոցով | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 705 | Հնարավո՞ր է ՄԻԱՎ-ով վարակվել ՄԻԱՎ վարակով հիվանդի հետ համատեղ սնունդ ընդունելիս | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 706 | Հնարավո՞ր է վարակվել ՄԻԱՎ-ով ՄԻԱՎ վարակ ունեցող մարդուն ձեռքով բարևելիս | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 707 | Կարելի՞ է արդյոք խուսափել ՄԻԱՎ-ով վարակվելուց՝ անցնելով թմրամիջոցների ոչ ներարկային օգտագործման | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 708 | Հնարավո՞ր է արդյոք ՄԻԱՎ-ով վարակվել՝ օգտագործելով ներարկման ասեղը, որն արդեն օգտագործված է եղել | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |

**Խմբի չափի գնահատման հարցեր**

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 801 | Ստացե՞լ եք մեթադոնային փոխարինող բուժում նախորդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 802 | Դիմե՞լ եք բժշկի թմրամիջոցներից կախվածությունից բուժվելու համար (բացի մեթադոնային փոխարինող բուժումից) նախորդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 803 | Ինչպիսի՞ն էր այդ բուժումը | □ գրանցված 1<br>□ անանուն 2<br>□ չի պատասխանել 99 |
| 804 | Ստացե՞լ եք ներարկիչներ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ի կողմից Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում): | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 805 | Ստացե՞լ եք պահպանակներ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ի կողմից Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում): | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 806 | Հետազոտվե՞լ եք ՄԻԱՎ-ի վերաբերյալ տվյալ տարվա հունվարի 1-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ի ուղղորդմամբ Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում): | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 807 | Ենթարկվե՞լ եք վարչական տույժի նախորդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 808 | Ստացե՞լ եք թևնոց տվյալ տարվա հուլիսի 00-ից 00-ը ընկած ժամանակահատվածում «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամք» ՀԿ-ի աութրիչ աշխատողների կողմից Երևանում (նմանապես՝ Գյումրիում, Վանաձորում): | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չգիտեմ 3<br>□ չի պատասխանել 99 |
| 809 | Ըստ Ձեզ՝ մոտավորապես ինչպիսի՞ն է Ձեր քաղաքում ապրող, ներարկային թմրամիջոցներ օգտագործող 18 տարեկան և ավելի տարիք ունեցող մարդկանց առավելագույն, նվազագույն և միջին թիվը | առավելագույն ________<br>նվազագույն ________<br>միջին ________ |

**Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

*Հավելված 3*

**ՀԱՐՑԱԹԵՐԹ**

**ԿՍԿ-ների շրջանում վարքագծային հետազոտությունների անցկացման**

| **Կտրոնի համարը** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

## Մաս 1. Անհատական սոցիալական ցանցի վերաբերյալ հարցեր

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 101 | Ձեր բնակավայրում ապրող 18 տարեկանից բարձր տարիքի որքա՞ն ԿՍԿ եք ճանաչում, որոնք ճանաչում են Ձեզ, և որոնք շարունակում են մինչ օրս տրամադրել սեռական ծառայություններ գումարի կամ այլ հատուցման դիմաց<br><br>Նշե՛ք «0», եթե որևէ մեկին չեք ճանաչում, և անցե՛ք 201 հարցին | ____ |
| 102 | Նրանցից քանիսի՞ն եք տեսել վերջին 1 ամսվա ընթացքում | ____ |

## Մաս 2. Մասնակից - հավաքագրող հարաբերություններ

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 201 | Ինչպե՞ս կբնորոշեիք Ձեր հարաբերությունները Ձեզ հավաքագրող անձի հետ (հնարավոր է մի քանի պատասխան): | ☐ հետազոտություն իրականացնող 1<br>☐ ընկեր 2<br>☐ գործընկեր 3<br>☐ միասին եք բնակվում 4<br>☐ հարևան 5<br>☐ մոտ ազգական 6<br>☐ բարեկամ 7<br>☐ ծանոթ 8<br>☐ անծանոթ 9<br>☐ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 202 | Ինչ՞ու եք վերցրել կտրոնը և համաձայնել մասնակցելու այս հետազոտությանը (հնարավոր է մի քանի պատասխան) | ☐ դրամական խրախուսում ստանալու համար 1<br>☐ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտվելու համար 2<br>☐ այլ հետազոտությունների համար 3<br>☐ ընկերոջ խնդրանքով 4<br>☐ հետազոտությունը հետաքրքրեց 5<br>☐ պարզապես կար ազատ ժամանակ 6<br>☐ այլ 7 |

**Մաս 3. Ժողովրդագրական բնութագրիչներ**

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| 301 | Տարիքը | ____<br>☐ չի պատասխանել 99 |
| 302 | Սեռը | ☐ արական 1<br>☐ իգական 2<br>☐ չի պատասխանել 99 |
| 303 | Ծննդավայրը | ☐ Հայաստանի Հանրապետություն 1<br>☐ Ռուսաստանի Դաշնություն 2<br>☐ Վրաստան 3<br>☐ այլ 4<br>☐ չի պատասխանել 99 |
| 304 | Կրթությունը | ☐ դպրոցում չի սովորել 1<br>☐ թերի հիմնական 2<br>☐ հիմնական 3<br>☐ թերի ավագ դպրոց 4<br>☐ ավագ դպրոց 5<br>☐ միջին մասնագիտական 6<br>☐ թերի բարձրագույն 7 |

| | | | |
|---|---|---|---|
| | | □ բարձրագույն | 8 |
| | | □ չի պատասխանել | 99 |
| 305 | Ընտանեկան կարգավիճակը | □ ամուրի | 1 |
| | | □ ամուսնացած | 2 |
| | | □ամուսնալուծված | 3 |
| | | □ քաղաքացիական ամուսնություն | 4 |
| | | □ այրի | 5 |
| | | □ չի պատասխանել | 99 |
| 306 | Ներկայումս ապրո՞ւմ եք սեռական զուգընկերոջ հետ | □ այո | 1 |
| | | □ ոչ | 2 |
| | | □ չի պատասխանել | 99 |
| 307 | Վերջին 1 տարվա ընթացքում  բացակայե՞լ եք տնից ավելի քան մեկ ամիս<br><br>**Եթե ոչ,  անցե՛ք 312 հարցին** | □ այո | 1 |
| | | □ ոչ | 2 |
| | | □ չի պատասխանել | 99 |
| 308 | Վերջին 1 տարվա ընթացքում, երբ  բացակայել եք տնից ավելի քան մեկ ամիս, որտե՞ղ եք եղել | □ Հայաստան-այլ մարզ | 1 |
| | | □ Ռուսաստան | 2 |
| | | □ այլ | 3 |
| | | □ չի պատասխանել | 99 |
| 309 | Վերջին 1 տարվա ընթացքում, երբ  բացակայել եք տնից ավելի քան մեկ ամիս, ունեցե՞լ եք սեռական հարաբերություններ առանց պահպանակի | □ այո | 1 |
| | | □ ոչ | 2 |
| | | □ չի պատասխանել | 99 |
| 310 | Ո՞րն է Ձեր եկամտի հիմնական աղբյուրը | □ եկամուտ չունի | 1 |
| | | □ լրիվ դրույքով աշխատանք | 2 |
| | | □ կես դրույքով աշխատանք | 3 |
| | | □ կենսաթոշակ | 4 |
| | | □ արտաքին օգնություն | 5 |
| | | □ այլ | 6 |
| | | □ չի պատասխանել | 99 |
| 311 | Աշխատելու նպատակով եղե՞լ եք արտերկրում 3 կամ ավելի ամիս,բայց ոչ ավելի, քան 12 ամիս, վերջին տարվա ընթացքում | □ այո | 1 |
| | | □ ոչ | 2 |
| | | □ չի պատասխանել | 99 |
| 312 | Որտե՞ղ եք սովորաբար/կամ առավել հաճախ տրամադրում կոմերցիոն սեռական ծառայություններ (տարբերակված մշտական և պատահական հաճախորդների համար)։ | □ տանը | 1 |
| | | □ մեկ ուրիշի տանը | 2 |
| | | □ հյուրանոցում | 3 |
| | | □ ավտոմեքենայում | 4 |

| | | |
|---|---|---|
| | | □ սրճարանում, գիշերային ակումբում 5<br>□ հասարակական վայրերում՝ փողոց, զբոսայգի 6<br>□ այլ (նշել) 7<br>□ չի պատասխանել 99 |
| 313 | Որևէ մեկը հարկադրե՞լ է Ձեզ ունենալու իր հետ սեռական հարաբերություններ հակառակ Ձեր ցանկության | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |

## <u>Մաս 4. Սեռական կյանքին և պահպանակի օգտագործմանն առնչվող հարցեր</u>

| No. | Հարց | Պատասխան |
|---|---|---|
| *Ցանկանում ենք Ձեզ մի քանի հարց ուղղել՝ կապված Ձեր սեռական վարքագծի հետ: Մենք հասկանում ենք՝ ինչքան անձնական են այդ հարցերը, բայց միաժամանակ ցանկանում ենք մեկ անգամ ևս նշել, որ Ձեր անձի գաղտնիությունը լիովին պահպանված է, և որ նույն հարցերն ուղղվում են բոլոր հարցվողներին: Սեռական հարաբերությունները ներառում են հեշտոցային և անալ հարաբերությունները:* | | |
| 401 | Ո՞ր տարիքում եք ունեցել առաջին սեռական հարա-բերությունը | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 402 | Ո՞ր տարիքից եք սկսել տրամադրել վճարովի սեռական ծառայություններ | ____<br>□ չի պատասխանել 99 |
| 403 | Վերջին մեկ տարվա ընթացքում ունեցե՞լ եք սեռական հարաբերություն ոչ կոմերցիոն զուգընկերոջ հետ<br>*Ոչ կոմերցիոն զուգընկեր. զուգընկեր, որի հետ սեռական հարաբերությունների դիմաց հատուցում չի ստացվել*<br><br>**Եթե ոչ, անցե՛ք 410 հարցին** | □ այո 1<br>□ ոչ 2<br>□ չի պատասխանել 99 |
| 404 | Քանի՞ ոչ կոմերցիոն զուգընկեր եք ունեցել վերջին մեկ ամսվա/շաբաթվա ընթացքում | Ամսվա ընթացքում<br>____<br>Շաբաթվա ընթացքում<br>____ |

| | | |
|---|---|---|
| | | ☐ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 405 | Վերջին մեկ ամսվա/շաբաթվա ընթացքում մեկ ոչ կոմերցիոն զուգնկերոջ հետ քանի՞ սեռական հարաբերություն եք ունեցել | Ամսվա ընթացքում<br>____<br>Շաբաթվա ընթացքում<br>____<br>☐ չի պատասխանել 99 |
| 406 | Վերջին մեկ ամսվա/շաբաթվա ընթացքում քանի՞ անգամ եք պահպանակ օգտագործել ոչ կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների ժամանակ | Ամսվա ընթացքում<br>____<br>Շաբաթվա ընթացքում<br>____<br>☐ չի պատասխանել 99 |
| 407 | Ոչ կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական վերջին հարաբերության ժամանակ Դուք (կամ Ձեր զուգընկերը) օգտագործե՞լ եք պահպանակ | ☐ այո 1<br>☐ ոչ 2<br>☐ չի պատասխանել 99 |
| 408 | Վերջին 30 օրվա ընթացքում ոչ կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների ժամանակ ի՞նչ հաճախականությամբ եք Դուք (կամ Ձեր զուգընկերը) պահպանակ օգտագործել<br><br>**Եթե «ամեն անգամ», անցե՛ք 410 հարցին** | ☐ ամեն անգամ 1<br>☐ համարյա ամեն անգամ 2<br>☐ երբեմն 3<br>☐ երբեք 4<br>☐ չի պատասխանել 99 |
| 409 | Ինչո՞ւ մշտապես պահպանակ չեք օգտագործում ոչ կոմերցիոն զուգընկերոջ հետ սեռական հարաբերությունների ժամանակ (հնարավոր է մի քանի պատասխան) | ☐ շատ թանկ է 1<br>☐ ամաչում եմ գնել 2<br>☐ դժվար է օգտագործել 3<br>☐ այդքան էլ հեշտ չէ ձեռք բերել 4<br>☐ նվազեցնում է հաճույքը 5<br>☐ ամաչում եմ խնդրել օգտագործել 6<br>☐ վստահում եմ 7<br>☐ չգիտեմ պահպանակի օգտագործման արդյու նավետության մասին 8<br>☐ օգտագործում եմ միայն հղիության կանխման նպատակով 9<br>☐ այլ ____________ 10 |

| | | |
|---|---|---|
| | | □ չի պատասխանել 99 |

| | | |
|---|---|---|
| 410 | Քանի՞ հաճախորդ եք ունեցել վերջին մեկ ամսվա/շաբաթվա ընթացքում | Ամսվա ընթացքում ____<br>Շաբաթվա ընթացքում ____<br>□ չի պատասխանել 99 |
